ԳԱՏՆԻԿ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԹԱՓՈՆԱԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1998 Թ. ՓԵՏՐՎԱՐԻՑ

29 ՀՈՒԼԻՍԻ 1994 Թ., ԹԻՎ 14 (88)

ԳԻՆԸ՝ 5 ԴՐԱՄ

«ՌՄԲԱՀԱՐՎԵԼ» Է ՅՈՒՊԻՏԵՐԸ

Օրերս համաշխարհային աստղագիտարաններն ու աստղագետները ասես.գիտաֆանտաստիկ կինոնկար դիտեին։ Հուլիսի անցած օրերին 27 ահռելի բեկորից կազմված գիսավորը շարժվեց դեպի Յուպիտեր։ Թեև մեկ տարի առաջ գիտնականներին հաջողվել էր նրկատել այն, բայց նա շատ անակնկալներ մատուցեց։ Եվ ահա, անակնկալորեն գիսաստղը «ռմբահարեց» Յուպիտերը։ Բազմաթիվ առեղծվածներով այդ մոլորակի կենսագրությունը հարըստացավ ևս մեկ իրադարձությամբ։ Առաջին բեկորի, որ ըստ գիտնականների 1 կմ երկարություն ուներ և ահռելի ծանրության գանգված, հարվածից հետո առաջացավ մի պայթյուն, որի բարձրությունը 1500 կմ էր և որը հավասար էր մի քանի հազար միջուկային ռումբերի պայթյունների ուժին։ Փոշու և գազերի ամպը պատեց Յուպիտերին, ասես երկրային մառախուղով պարուրվեց այն։ Յուպիտերի վրա հարվածից առաջացավ վիթխարի մեծության մի սպի, որը, հավանական է, իջվածք է։

Ասում են, թե մոլորակների և այդ մեծության գիսաստղերի «առճակատումներ» տեղի են ունենում միլիոն տարին մեկ։ Իսկ ինչ գիտեն գիտնականները մեր մոլորակի մասին, երբ է մեզ մոտ հյուրընկալվել նման մի գիսաստղ։ Ասում են նաև, թե Յուպիտերի իրադարձություններից մեր մթնոլորտում ոչ մի փոփոխություն չի կատարվել։ Փառք Աստծո... Իսկ ահա վերջին հարվածներից մեկի ժամանակ Յուպիտերը պայծառորեն լուսավորվեց, իսկ հարվածող բեկորի տրամագիծը մոտ 350 կմ էր։

Արտասահմանյան գործակալությունների այս և այլ հաղորդագրությունները մենք խնդրեցինք մեկնաբանել ՀՀ ԳԱԱ-ի Բյուրականի աստղադիտարանին։

Արևադարձային շատ կղզիներ ժամանակին եղել են արևմտյան տերությունների միջուկային առաջին փորձակայանները։ Սակայն շատ գիտնականներ նախկինում վարակված վայրերում այսօր փորձեր են անում վերականգնել բնությունը։ Իսկ փորձարկումները շարունակվում են։

Ջրածնային ռումբը. երեք վարկած։ Կարդացեք երրորդ էջում։

Կլոդ Մութաֆյան. Հայաստանը ողջ է... կա...

— Առաջին անգամ Հայաստան եկա 1980-ին՝ մաթեմատիկի հարցերով։ Զրգարմանաք, իմ առաջին այցելության ամենամեծ հայտնագործությունն այն էր, որ ինձ համար պարզեցի, որ Հայաստանը ողջ է, կա, կենդանի ապրող մարմին է...

Այս բառերով սկսեց իր խոսքը Հայրենապաշտ, մեծ հայրենասեր գիտնական-մաթեմատիկոսը, գիտնական-պատմաբանը, հայագետը, սփյուռքի հասարակական ակտիվ գործիչը՝ մեր Կլոդ-Արմեն Մութաֆյանը, այժմ նաև՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամը։

Հուլիսի 20-ին, ՀՀ ԳԱԱ-ի նախագահության նիստի ժամանակ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Տ. Սարգսյանը, հանձնելով ակադեմիկոսի գրքույկը Կլոդ Մութաֆյանին, նշեց այն մեծ, հայրենասիրական աշխատանքը գիտության և հասարակական կյանքի բնագավառում, որ կատարում է ֆրանսահայ գիտնականը Արցախյան պատերազմի ծանր ժամանակներում Կլոդ Մութաֆյանը իր ժողովրդի հետ է, Հայաստանի հետ, մարտընչող արցախցիների կողքին։

Կլոդ Մութաֆյանի կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված աշխատությունը, նրա ելույթները հայկական և ֆրանսիական մամուլում իսկական սքրանք է, ոչ միայն գիտական սխրանք, այլև քաղաքացիական։ Այս օրերին, երբ նորից գլուխ է բարձրացրել պանթուրքիզմը, Կ. Մութաֆյանի ամեն մի ելույթ ժամուլում հակահարված է թուրքամետ այն գործիչներին, ովքեր քաղաքական իրենց շահից ելնելով խաղում են հայ ժողովրդի ճակատագրի հետ։

Աչալուս բնորոշեցին Կլոդ Մութաֆյանին իրենց շնորհավորանքի խոսքում ակադեմիկոսներ Մ. Ներսիսյանը, Գ. Ղարիբջանյանը, ՔղՔակից անդամ Մ. Աբելշտյանը, պատմական գիտությունների դոկտոր Պ. Մուրադյանը, Հայաստանի պատկերասրահի տնօրեն Շ. Խաչատրյանը, պատմ. գիտությունների թեկնածու Ա. Բոզոյանը։

Ջերմ, շնորհակալական խոսք ասաց ՀՀ ԳԱԱ նոր ակադեմիկոս Կլոդ Մութաֆյանը, նշելով Սփյուռքի և Հայաստանի պատմական առաքելությունների, խնդիրների գիտակցման և փոխադարձ՝ մեկը մյուսին նպաստող հարցերի մասին։

Մեր «Նպատակի» շնորհավորանքները ևս հայրենասեր գիտնականին։

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

Հայերենի բարբառների պահպանման և ուսումնասիրման գործի արմատական բարելավման, բարբառագիտության նյութա-տեխնիկական ապահովության հարցերը կարևորվեցին ՀՀ ԳԱԱ-ի նախագահության կողմից։

Նիստին, որը վարում էր ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Տ. Սարգսյանը, բարբառագիտության վիճակի մասին մանրամասն պատմեց ակադեմիկոս Գ. Ջահուկյանը։ Հայերենը աշխարհի բարբառներով հարուստ լեզուներից է։ Այսօր բարբառների ուսումնասիրությունը ու պահպանությունը առավել կարևոր նշանակություն և իմաստ է ստանում։ Նոսրանում են բարբառակիր մարդիկ, ձուլվում, աղավաղվում են բարբառները, մինչդեռ դրանց պահպանումը նշանակում է պահպանել մեր ազգի պատմական դիմանկարը,, ավանդություններն ու աշխարհընկալումը, նրա հարուստ բանահյուսությունը։ Կենդանակի այդ նպատակի համար չպետք է խնայել միջոցներ, սակայն անհրաժեշտ է նաև ճիշտ հաշվարկ, գիտական աշխատանքի ժամանակակից ձևեր ու միջոցներ։ Միայն վստահելով ու փոխադարձաբար հնարավոր չէ առաջ մղել գիտությունը, անհրաժեշտ են ձայնագրիչներ, տեսագրող սարքեր, համակարգիչներ, ժամանակակից գիտական միջավայր...

ՀՀ ԳԱԱ նախագահությունը իր հուլիսի 20-ի նիստում հաստատեց ՀՀ ԳԱԱ բաժանմունքների բյուրոների, պրոբլեմային գիտական խորհուրդների կազմերը և խորհուրդների նախագահներին։

Հարցի առթիվ զեկուցումներով հանդես եկան բաժանմունքների ղեկավարները, ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտները։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՔԱՂԱՔԱՑՈՒԻՆ ԵՎ ՄՏԱԾՈՂԻՆ

Կա մի պարզ ճշմարտություն. երբ թերթը չգիտի իր ընթերցողին, հետևապես՝ նաև նրա ճաշակն ու հետաքրքրությունները, իր էջերը լցնում է ցաքուցրիվ նյութերով, աննպատակ, անհասցե հոդվածներով։ Ընթերցողն էլ պետք է իմանա իր թերթը, դառնա նրա մշտական ընթերցողը, ունկնդրի նրան, նա դառնա նրա խորհրդատուն։ Թերթը սովորում է ընթերցողից, ընթերցողը հարրստացնում է իր ներաշխարհն ու գիտելիքները թերթի շնորհիվ։

Ուրեմն՝ որն է մեր թերթի առաքելությունը, ով է նրա ընթերցողը։

«Նպատակը» Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պաշտոնաթերթն է, հայ գիտնականների թերթը, իսկ հայ գիտնականները՝ մեծից մինչև այսօր եղել են ժողովրդի հետ, ծառայել նրա բոլոր խավերի կրթության ու բարգավաճման մեծ գործին։ Հայ գիտնականը, հակառակ բոլոր ժամանակների իր դժվար կյանքին, գրկանքներին, հավատարիմ ծառայել է ազգին, իր հարազատ ժողովրդին. ահա թե ինչու հայ գիտնականների թերթը՝ դա առաջին հերթին ժողովրդի թերթն է, նրա բարեկամն ու խորհրդատուն։

Սիրելի ընթերցող. դիտավորյալ մի քանի անգամ կրկնեցինք **ժողովուրդ** բառը, քանի որ վերջինիս շահի պաշտպանությունից, վերջինիս հոգսերից դուրս այլ հետաքրքրություն ու շահ չպետք է լինի թերթի ու լրագրողի համար։

«Նպատակը» ակադեմիայի պաշտոնաթերթ է. այսինքն չի պատկանում որևէ կուսակցության կամ խմբակցության, որևէ միության կամ ընկերության։ Ինչպես ակադեմիան, այնպես էլ նրա պաշտոնաթերթը, ապակուսակցական է։ Բայց դա չի նշանակում, թե մեր էջերը փակ են տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների առաջ։ Ո՛չ, ճիշտ հակառակը։ Լինել ապակուսակցական, կնշանակի հեղինակի, թերթին որևէ հոդվածով դիմողի մեջ առաջնալիքը համարել նրա բարձրացրած հարցը, թեման, օգտակարությունը, նյութի էությունը՝ անկախ հեղինակի կուսակցական պատկանելությունից, նրա գաղափարական աշխարհընկալումից։

«Նպատակը» ակադեմիայի թերթն է. այսինքն նրա էջերը բաց են հանրապետության և սփյուռքի գիտնականների առաջ։ Դա մեծ առավելություն է գիտության մշակների համար։ Գիտությունը չի կարող զարգանալ, ծառայել իր նպատակին, եթե այն չի հրապարակվում, մնում է թղթապանակում, գիտնականների նեղ շրջանակի սեփականությունը։ Հրապարակայնությունը գիտության զարգացման կարևոր պայմանն է։ Այդ իմաստով էլ երբեմն զարմանք կարող է պատճառել, թե ինչու և ինչպես առանձին գիտնականներ տարիներ շարունակ մամուլում հանդես չեն գալիս ոչ որպես գիտնական-հետազոտող, ոչ էլ որպես քաղաքացի՝ ժողովրդին ու երկրին վերաբերող պրոբլեմների շուրջ։ Մի քանի տարի առաջ մտավորականների, հատկապես՝ գիտնականների համար ծանր հոգս էր, պրոբլեմ՝ իրենց հուզող հարցի մասին ճանապարհ բացել դեպի մամուլի էջերը։ Հիմա, երբ մամուլն առավել դյուրությամբ է տեղ տալիս գիտնականների, երբ նրանք ունեն իրենց թերթը՝ գիտությունների ազգային ակադեմիայի պաշտոնաթերթը, ինչո՞ւ են լռում։ Բացատրությունը, թեև անհասկանալի է, բայց երկուսն են. կամ ասելիք չունեն, կամ հարկ չեն համարում իրենց խոսքն ասել։ Երկու դեպքում էլ հարգելի ու հասկանալի չէ բացատրությունը։ Էլ ինչ գիտնական, որ ամբիոնում, լսարանում, գրասենյակում, գիտահետազոտական ինստիտուտում տեղ, հաստիք, աթոռ է զբաղեցնում, պետական թեկուզ և սուղ միջոցներ օգտագործում, բայց այն իր գիտությամբ պարզվում է միայն իր համար է։ Իսկ ուր մնաց նրա՝ ժողովրդի բարեկամ, խորհրդատու, պետության ամենամեծ հարստություն, վաղվա օրը, գալիքը կանխագուշակող ու կանխորոշող իր առաքելությունը։

«Նպատակը» զանգվածային լրատվության միջոց է, այն իր էջերը չի սահմանափակում միայն գիտության պրոբլեմների ոլորտով։ Մարդիկ իրենց հոգսերով, սոցիալական հարցերով, նրանց ներկան ու ապագան չեն կարող անուշադրության արժանացնել մեր կողմից։ Մեր դռները բաց են բոլորի առաջ, ով իրեն համարում է «Նպատակի» ընթերցողը, հետևապես՝ բարեկամն ու ընկերը։

Վերջերս հաճախ են լինում դեպքեր, երբ առանձին հեղինակներ, գիտության աշխատողներ գալիս են խմբագրություն և հարցնում. «Եթե ես այսպես գրեմ, կտպագրե՞ք»։ Հարցը մեզ զարմանք է պատճառում, իսկ մեր դրական պատասխանը՝ կրկնակի զարմանք այցելուին։ Չկա թեմայի, մեկնաբանության, հարցադրումների որևէ սահմանափակում. ցանկացած հոդվածի, տեղեկատվության նկատմամբ միակ պահանջը՝ հասարակական հետաքրքրություն, արժեք ներկայացնելն է։ Ոչ կուսակցական թերթի առաքելությունն էլ այն է, որ նա իսկական բազմակարծության, պլյուրալիզմի մարմին է և ազատ տեղ տալով բոլորին, դրանով իսկ օգնում է պետությանը՝ ունկնդրելու, ժամանակին տեսնելու մեր հասարակական, ժողովրդական մտքի ու միտումների զարգացումը ու ընթացքը։

Մենք սպասում ենք մեր անշահ, ազնիվ, շահագրգիռ հեղինակին՝ քաղաքացուն ու մտածողին։

Մեկնաբանում է Բյուրականը. աղետները մերձակա տիեզերքում

Աստղագիտական ժամանակակից սարքավորումները թույլ են տալիս ուսումնասիրել հեռավորությունների մի վիթխարի դիապազոն՝ մի քանի հարյուր հազար կիլոմետրից մինչև մի քանի հազար մեգապարսեկ։ Եթե հեռավորությունները ներկայացնենք լուսային ժամանակի միավորներով, այսինքն, այն տևողությամբ, որն անհրաժեշտ է, որպեսզի լույսն անցնի տրվյալ տարածությունը, ապա կարող ենք ասել, որ մերձավորագույն տիեզերական մարմնից՝ Լուսնից լույսը մեզ է հասնում մոտավորապես մեկ ամբողջ քառորդ վայրկյանի ընթացքում, իսկ ամենահեռավոր քվազարներից՝ 10—15 միլիարդ տարվա ընթացքում։ Նշանակում է, վերջինները գրեթե միլիարդ միլիարդ անգամ ավելի հեռու են, քան Լուսինը։

Հեռավորությունների այդ հսկա դիապազոնը սովորաբար պայմանականորեն բաժանվում է երեք դասի։ Առաջին դասի կամ մերձավորագույն մարմինների մեջ ընդգրկվում են Արեգակի համակարգի մարմինները, որոնց թվում ամենահեռավոր մոլորակը Պլուտոնն է։ Կրկին համեմատության եզր ունենալու համար ընդունենք, որ լույսը, որն Արեգակից Երկիր է հասնում մոտավորապես ութ րոպեի ընթացքում, Արեգակից մինչև Պլուտոն ընկած տարածությունը հաղթահարելու համար ծախսում է ավելի քան հինգ ժամ։ Երկրորդ խմբին կարող են դասվել մեր գալակտիկային պատկանող մարմինները (մեր գալակտիկայի մի ծայրից մինչև մյուսը լույսն անցնում է մոտավորապես հարյուր հազար տարվա ընթացքում)։ Եվ վերջապես այն մարմինները, որոնք գտնվում են մեր գալակտիկայի սահմաններից դուրս, պատկանում են երրորդ դասին։

Այսպիսով, Յուպիտերը (կամ, ըստ հայկական անվանման, Լուսնթագր), որպես Արեգակի համակարգի մոլորակ, պատկանում է մերձավորագույն տիեզերական մարմինների թվին։ Այն մեր համակարգի խոշորագույն մոլորակն է, որը Երկրին տրամագծով գերազանցում է մոտ 11 անգամ, իսկ զանգվածով՝ ավելի քան 300 անգամ։ Այդ հսկա մոլորակը Արեգակի շուրջը պտտվում է ավելի քան հինգ անգամ ավելի մեծ հեռավորության վրա, քան մեր մոլորակը, և մեկ լրիվ պտույտ է կատարում գրեթե տասներկու տարվա ընթացքում։ Այդ օրերին այդ մոլորակը բավականին լավ տեսանելի է երեկոյան ժամերին և մայր է մտնում կեսգիշերից հետո։ Ոչ մեծ աստղադիտակով դիտելիս, այն երևում է պայծառ սկավառակի տեսքով, իսկ մոլորակի հարաևնությամբ հեշտությամբ կարելի է տեսնել նրա խոշորագույն չորս արբանյակները, որոնք գրականության մեջ նաև գալիլեյան արբանյակներ են կոչվում՝ դրանք հայտնագործողի անունով։

Այս համառոտ նախապատմի մասին գոնե տարրական տեղեկություններ տալ ընթերցողների այն բավականին ստվար հատվածին, որոնք իսկապես շատ աղոտ պատկերացումներ ունեն տիեզերական մարմինների տեղի ու չափերի վերաբերյալ։ Վերջին շաբաթների ընթացքում Յուպիտերը համընդհանուր ուշադրության առարկա է դարձել, այն շարունակ հիշատակվում է և՛ մամուլում, և՛ հեռուստատեսությամբ, սակայն գլխավորապես արծարծվում են այն հարցերը, որոնք առնչվում են այդ մոլորակի հետ կապված տիեզերական աղետի հետ։ Այդ աղետի վերաբերյալ բազմաթիվ հաղորդումները շատ մարդկանց գիտակցության մեջ առաջացնում են նաև թյուր պատկերացումներ, որոշ մարդիկ նույնիսկ սպասում էին, որ Յուպիտերը կարող է տրոհվել մասերի և վերանալ որպես խոշոր մոլորակ։

Որպեսզի պատկերացումները քիչ թե շատ մոտ լինեն իրականությանը, պետք է առաջին հերթին ուշադրություն դարձնել Արեգակի համակարգի կառուցվածքին ու այն մարմինների բազմությանը, որոնք մտնում են այդ համակարգի մեջ։ Շատ չխորանալով մանրամասնությունների մեջ, կարող ենք ասել, որ մեր համակարգը բաղկացած է կենտրոնական աստղից՝ Արեգակից, ինը խոշոր մոլորակներից, որոնցից խոշորագույնը, ինչպես արդեն նշվեց վերևում, Յուպիտերն է, այդ մոլորակների շուրջը պտտվող արբանյակներից, հազարավոր փոքր մոլորակներից կամ աստերոիդներից, գիսավորներից, անթիվ-անհամար մանր բեկորներից և միջմոլորակային փոշուց։ Այդ բոլորը միասին կազմում են անընդհատ շարժման մեջ գտնվող մի ինքնահամաձայնեցված համակարգ, որի բոլոր շարժումները կառավարվում են փոխադարձ ձգողության օրենքներով։ Ավելորդ է ասել, որ որքան ավելի մեծ է այդ համակարգին պատկանող որևէ անդամի զանգվածը, այնքան ավելի մեծ է նրա ազդեցությունն այլ մարմինների շարժման վրա։ Այդ տեսակետից կարևորագույն դերը, իհարկե, պատկանում է Արեգակին, որի մեջ կենտրոնացած է ամբողջ համակարգի զանգվածի ավելի քան 99,9 տոկոսը։ Այդ շարժումների վրա զգալի ազդեցություն են թողնում նաև մյուս մոլորակները, հատկապես երկու հսկաները՝ Յուպիտերը և Սատուրնը, որոնց հրգոր ձգողական դաշտն անընդհատ փոփոխություններ է մտցնում այդ մոլորակների մոտակայքով անցնող մարմինների ուղեծրերի մեջ։

Պետք է նկատի առնել նաև, որ առավել խոշոր մարմինների ուղեծրերը հաճախ ավազահատիկի։

Երկնային այդպիսի մարմինների բախումներ միշտ էլ տեղի են ունեցել։ Բոլորին քաջ հայտնի «ընկնող աստղի» երևույթը հենց այդպիսի բախման արդյունքը է, երբ մեր մոլորակին են բախվում փոշեհատիկներից մինչև ավազահատիկներ կամ քարի ավելի խոշոր բեկորներ, ընդ որում, որքան ավելի մեծ են այդ բեկորների չափերը, այնքան ավելի հազվադեպ են նման բախման դեպքերը։ Այդ մարմինները վայրկյանում մի քանի տասնյակ կիլոմետր արագությամբ մխրճվում են Երկրի մթնոլորտի մեջ և բախվում օդի մոլեկուլներին։ Դրա հետևանքով դրանք արագորեն շիկանում են և, եթե միլիմետրի տասնորդական մասերից ավելի փոքր չափերի են, ամբողջապես այրվում են արդեն 60—80 կիլոմետր բարձրության վրա, թողնելով միայն կարճատև լուսավոր հետք։

Սակայն եթե մարմնի չափերն ավելի մեծ են, ապա այն ամբողջապես չի այրվում, այլ հասնում է մինչև օդի ավելի խիտ շերտերը, որտեղ օդի դիմադրությունը շատ ավելի մեծ է։ Այդ դիմադրության պատճառով մարմնի արագությունը խիստ պակասում է, և այն Երկրի մակերևույթին է ընկնում որպես երկնաքար։ Անհամեմատ ավելի հազվադեպ են այն խոշոր երկնաքարերը, որոնց զանգվածը հասնում է հարյուրավոր և ավելի տոննաների։ Հասկանալի է, որ դրանց անկումը արդեն այնքան աննկատ չէ, ինչպես «ընկնող աստղերի» հիմնական մասինը։ Ինչպես Երկիրը, այնպես էլ մյուս խոշոր մոլորակները իրենց գոյության ընթացքում անընդհատ ենթարկվել են այդպիսի «ռմբակոծություններին», և մինչև այժմ էլ կարելի է հայտնաբերել այդ հարվածների հետքերը։ Երկնաքարերից առաջացած խառնարանները առավել լավ են երևում, օրինակ, Լուսնի վրա, որտեղ նման հետքերը մթնոլորտի բացակայության պատճառով կարող են գոյատևել միլիոնավոր տարիներ։

Փաստորեն, ճիշտ այսպիսի երևույթի ականատես եղանք մենք վերջին օրերի ընթացքում, երբ Յուպիտերի վրա ընկավ Շումեյկեր-Լևիի գիսավորի տրոհված միջուկի բեկորները։ Վերջիններս ընկել էին Յուպիտերի հզոր ձգողականության ոլորտը, որից դուրս գալու համար բավարար չէր նրանց էներգիան։ Նրանց դեպքում մարմինը կամ կարող է դառնալ ավելի մեծ մարմնի արբանյակը, կամ ընկնել վերջինս վրա։ Այս դեպքում իրականացավ վերջին հնարավորությունը։ Պետք է նկատել, որ հազվադեպ երևույթ չէ նաև գիսավորի միջուկի տրոհումը, ինչն այս դեպքում նախորդել էր բախմանը։ Նման երևույթ սովորաբար տեղի է ունենում արտաքին ձգողական ուժերի և ներքին լարվածությունների առկայության հետևանքով։ Այսպես, օրինակ, Վեստ 1975 թ. գիսավորի միջուկը 1975 թ. մարտ ամսվա մի քանի օրվա ընթացքում տրոհվեց ու մասերի բաժանվեց բառացիորեն դիտող աստղագետների աչքերի առջև։ Դրանից հետո միջուկից առաջացած բեկորներն Արեգակի շուրջն իրենց պտույտը շարունակում են որպես առանձին մարմիններ։

Նշանակում է, երևույթը որպես այդպիսին Արեգակի համակարգի գոյության միլիարդավոր տարիների ընթացքում ավելի խոշոր և ավելի փոքր մասշտաբներով կրկնվել է բազմաթիվ անգամներ։ Այս անգամվա յուրահատկությունը կարելի է համարել միայն այն, որ աստղագիտության ժամանակակից հնարավորությունները թույլ տվեցին հաշվարկների միջոցով նախապես կանխագուշակել բախման հնարավորությունը և հետևել դրա ամբողջ ընթացքին։ Ահա, հենց այդ տեսակետից է երևույթը բացառիկ, որն արդեն աստղագետների աշխատանքի արդյունքն է, որոնք իսկապես հասել են դիտողական ու հաշվողական բացառիկ ճշգրտության։

Հայկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բյուրականի աստղադիտարանի տնօրենի պաշտոնակատար

ԿԱՄԱՐԻ ՏՈՆՈՅԱՆ

ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ Է ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒ

(«ՇՈՒԿԱՆ» ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆ ՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ)

Ամեն մի նորմալ էկոնոմիկա պիտի ծառայի բնակչության բոլոր խավերի սոցիալական բավականաչափ ապահովությանը: Հակառակ դեպքում, մենք բնականոն պիտի համարենք հասարակության սոցիալական շերտավորումը, այն, որ կյանքը ոմանց համար, աշխարհ գալուց հետո, անընդմեջ խրախճանք պիտի լինի, ոմանց համար՝ շարունակական թշվառություն ու տառապանք: Հիշո՞ւմ եք Ֆրիկը, դեռ 18-րդ դարում.

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի ու ջորի,
Մէկին ոչ հուլ մի, ոչ մաքի:

Գորբաչովյան «վերակառուցման», ԽՍՀՄ-ի փլուզման և անցկացվող «տնտեսական ռեֆորմների» հետևանքով մենք ունենք առավելագույնս չկառավարվող մի էկոնոմիկա, որին հատուկ են գների շարունակական ածը, դրամի մշշտական արժեզրկումը, արտադրության անվճարունակությունը, երկարաժամկետ ներդրումների անշահութաբերությունը, արտադրության մշտական կրճատումը և բնակչության կենսամակարդակի անխուսափելի անկումը:

ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻՆԵՐ

«Ռեմոկրատ-ռեֆորմատորները» հավատացնում են, թե սոցիալիստական կառավարվող էկոնոմիկայից «շուկայականին» (այսինքն տարերայինկապիտալիստականին) անցնելու ընթացքում, որ իրագործում են իրենք, առաջին հերթին ապահովվում են բնակչության սոցիալապես անպաշտպան խավերի շահերը, թե այդ անցումը, այդպիսով, ունի «սոցիալական ուղղվածություն»:

Ամեն մի պետություն, որ ձեռնարկել է «ազատ շուկայական» էկոնոմիկա ստեղծելու, պետք է ունենա իր սեփական բուրժուազիան: Որոշ անհատների կամ խմբերի մոտ նախնական կապիտալի կուտակումը և այսպիսով սեփական կնպիտալիստական բուրժուազիայի ձևավորումը միշտ էլ եղել է բավական երկարատև պրոցես, որ Արևմուտքի զարգացած երկրներում տևել է հարյուրամյակներ: Դասակարգային հասարակարգը, ընդհուպ մինչև կապիտալիստականը, դեռևս չի հնարել հարստանալու, նախնական կապիտալ կուտակելու մեկ այլ եղանակ, քան տնտեսական կամ ուժային միջոցներով ուրիշի աշխատանքի կամ հարստության յուրացումը:

ԱՊՀ-ի երկրներում՝ Ռուսաստանում, Ուկրաինայում, Հայաստանում, Վրաստանում և մյուսներում, հասկեպորեն «ազատ շուկայական հարաբերություններ» հաստատող «ռեմոկրատ-ռեֆորմատորներ ին ն» շտապ կերպով անհրաժեշտ են բուրժուաներ կամ, ինչպես ընդունք անվանում են՝ «գործարար մարդիկ»: Եվ քանի որ նույն «ռեմոկրատ-ռեֆորմատորների» կողմից իսկ քայքայման հասցված էկոնոմիկան հնարավորություն չի տալիս այդ բուրժուաների հարստացումը կատարել ո՛չ սեփական երկրի ներսում՝ արտադրական-տնտեսական գործունեության ճանապարհով և ո՛չ էլ՝ միջազգային շուկայում՝ ուրիշ երկրների հարստությունը որպես շահույթներ յուրացնելու հաշվին, ապա սեփական երկրի աշխատավորների գրպաններից դրամը նորաստեղծ բուրժուազիայի գրպանները տեղափոխելը, այսինքն սեփական աշխատավորներին շահագործելը և հարստահարելը դարձել է «ռեմոկրատական-ռեֆորմատորական» կառավարությունների առաջնահերթ խնդիրը և տնտեսական քաղաքականության նպատակը:

ՀԱՐՍՏԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

Դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայի կարևորագույն առանձնահատկություններից մեկը այն է, որ, ի տարբերություն հագեցած ազատ էկոնոմիկայի, գների բարձրացումը այստեղ կատարվում է ոչ միայն բնակչության գնողունակության հետ շաղկապված, դրա՝ բարձրացումից հետո միայն, այլ, որպես կանոն, նախորդում է բնակչության եկամուտների ավելացմանը, արժեզրկելով բնակչության մոտ արդեն առկա դրամը՝ արդեն ստացած աշխատավարձը, կենսաթոշակը, խնայողություններ՝ հնարավոր դարձնելով դրանց մի՝ հերթական մասի անհատույց յուրացումը: Մինչդեռ գների բարձրացման դիմաց պետության կողմից դրամական փոխհատուցումը և «սոցիալական օժանդակությունը» աշխատավարձի բարձրացումը և այլն կատարվում են գների բարձրացումից հետո միայն, միտումնավոր մեծ հապաղումով ոչ ադեկվատորեն, և՝ արդեն իսկ արժեզրկված դրամով:

Մյուս կողմից, աշխատավորների, բնակչության սոցիալապես անապահով խավերի եկամուտների ամեն մի այդպիսի բարձրացմանը, այսինքն էկոնոմիկական միջավայրում ինֆլյացիոն (արժեզրկված) դրամի ամեն մի նոր քանակության հայտնվելուն անհապաղ հետևում է ապրանքների ու ծառայությունների գների ոչ ադեկվատ՝ գերազանցող բարձրացումը, և, փաստորեն, պետության կողմից այդ եկամուտների բարձրացման համար հատկացված դրամական միջոցները անմիջապես գնում են լցնելու հարըստացող արդյունաբերական, առևտրական և ֆինանսական բուրժուազիայի գրպանները. «եկամուտների ավելացման» դրական ազդեցությունը բնակչության աղքատացող խավերի կենսամակարդակի վրա մարում է՝ չհասցնելով ընկալվել: Աշխատավարձի, կենսաթոշակների և նպաստների ավելացման հետևանքով չունևորները չեն դառնում ունեվոր, իսկ հարուստները դառնում են ավելի հարուստ: Այսպիսով, «սոցիալական պաշտպանության» ամեն մի ակտ վերածվում է աշխատավորների շահագործման, բնակչության հարստահարման նոր ուժեղացման, օժանդակում է նախնական կապիտալի հետագա կուտակմանը նոր բուրժուազիայի մոտ:

Այդ իսկ պատճառով էլ, որքան էլ պարադոքսային թվա, այն պայքարը, որ տանում են աշխատավորության, բնակչության անապահով խավերի ամեն տեսակի «պաշտպանները» աշխատավարձի, կենսաթոշակների և նպաստների չափերի բարձրացման համար, դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկան միջավայրում ըստ էության, օբյեկտիվորեն պայքար է գների հետագա բարձրացման, նոր բուրժուազիայի հետագա հարըստացման և ինֆլյացիոն պրոցեսի հետագա խորացման համար: Բանվորների, աշխատավորների, անապահով խավերի շահագործումը ևնազեցնելու, նրանց սոցիալական ծանր վիճակը թեթևացնելու միակ հնարավոր միջոցն այդ էկոնոմիկայում գների կայունացումն է, ավելին՝ իջեցումը (գների վրա խիստ վերահսկողություն սահմանելով հանդերձ), մի բան, որը, սակայն, դեֆիցիտային-ինֆլյացիոն միջավայրում անհնարին կդարձնի կապիտալիստական հարաբերություններին անցնելու ընթացքում նոր բուրժուազիայի հարստացումը և՝ այդպիսով հենց այդ՝ կապիտալիստական հարաբերություններին անցնելու պրոցեսն իսկ և, հետևաբար, հակառակ կլինի այն նպատակներին, որոնց հետապնդում են «ռեմոկրատ-ռեֆորմատորները» իրենց տընտեսական քաղաքականության մեջ՝ կապիտալիստական («շուկայական») դասակարգային հասարակարգի կառուցմանը: Ուրեմն իսկական ժողովրդական, դեմոկրատական նպատակներ իրագործելու համար «դեմոկրատ-ռեֆորմատորները» պետք է հրաժարվեն իրենց՝ այդ քաղաքականությունից: Հնարավոր չէ աշխատավորների, բնակչության չունևոր խավերի սոցիալական պաշտպանությանն ուղղված դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկա:

Գների կանխավ բարձրացումը, դրան հետևող՝ աշխատավորների, չքավոր խավերի եկամուտների մեծ ուշացումով, արդեն իսկ արժեզրկված դրամով և ոչ ադեկվատ բարձրացումը և դրան հետևող՝ գների անհապաղ և ոչ ադեկվատ բարձրացումը՝ դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայի հենց այն հիմնական հակաէկոնոմիկական մեխանիզմը է, որի օգնությամբ իրականացվում է աշխատավորների և բնակչության մյուս խավերի տոտալիտար շահագործման և հարստահարման ավելի ու ավելի՝ սաստկացումը, նրանց ավելի ու ավելի աղքատացումը և նախնական կապիտալի արագացված կուտակումը նոր բուրժուազիայի մոտ:

ՀԱՐՍՏԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԽՈՒՐ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բնակչության, աշխատավոր մասսաների աղքատացման այս պրոցեսը առանձնապես շեշտակիորեն է տեղի ունենում Հայաստանում, «շուկայական» հարաբերություններին անցնելու ճանապարհին դեֆիցիտային-ինֆլյացիոն վիճակի հասցված նրա էկոնոմիկայում: Ներկայիս կառավարողների օրոք՝ անցած երեք տարում, 1991 թվի հունվարի 1-ից մինչև 1994 թվի հունվարի 1-ը, կենսականորեն ամենաանհրաժեշտ մթերքների և ապրանքների գները բարձրացել են. հացինը՝ մոտ 1000 անգամ, մսինը՝ միջին հաշվով 30000 անգամ, կաթինը՝ 13000, կարագինը՝ 21700, պանրինը՝ միջին հաշվով 50000, ձվինը՝ 22500, շաքարավազինը՝ 17000, կարտոֆիլինը՝ 46000, սոխինը՝ 100000, մակարոնեղեն-ձավարեղեն ի ն ը՝ ավելի քան 10000, աղինը՝ 20000, օճառինը՝ 60000, լուցկունը՝ 40000, ծխախոտինը՝ 14000 անգամ և այլն:

Մինչդեռ նույն ժամանակամիջոցում բնակչության միջին աշխատավարձի չափը ավելացել էր ընդամենը 34 անգամ:

Դա նշանակում է, որ քաղաքացին 1994 թվի հունվարի 1-ին իր ստացած միջին աշխատավարձով 1991 թվի հունվարի 1-ի համեմատությամբ կարող էր գնել 30 անգամ ավելի քիչ հաց, 900 անգամ ավելի քիչ միս, 380 անգամ ավելի քիչ կաթ, 640 անգամ ավելի քիչ կարագ, 1470 անգամ ավելի քիչ պանիր, 660 անգամ ավելի քիչ ձու, 1320 անգամ ավելի քիչ կարտոֆիլ, 2950 անգամ ավելի քիչ սոխ, 290 անգամ ավելի քիչ մակարոնեղեն-ձավարեղեն, 590 անգամ ավելի քիչ աղ, 1760 անգամ ավելի քիչ օճառ, 1170 անգամ ավելի քիչ լուցկի, 410 անգամ ավելի քիչ ծխախոտ և այլն:

Կարելի է ասել, աշխատավորների տոտալիտար շահագործման և բնակչության հարըստահարման «շուկայական» մեխանիզմը Հայաստանում այդ վերջին երեք տարիների ընթացքում գործել է իր ողջ հնարավոր հզորությամբ: Անցած կես տարում աշխատավարձի և կենսաթոշակների աճի համեմատ գների հետագա խիստ առաջընթաց աճը համարյա սպառել է բնակչության շահագործվելու հնարավորությունները և գերազանցապես ներքին շուկայում սեփական աշխատավորներին շահագործելու միջոցով շահույթներ ստացող Էկոնոմիկան մոտենում է ֆիզիկական կոլապսի եզրին:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՐՍՏԱՆՈՒՄ

Սոցիալիստական էկոնոմիկայում աշխատավորների ստեղծած հավելյալ արժեքը գանձվում էր պետության կողմից և ապա պետության իսկ կողմից առանց մնացորդի վերադարձվում էր աշխատավորներին (սպառման հասարակական ֆոնդերի, ձեռնարկություններին հատկացվող դոտացիաների ձևով և այլն). դրանով իսկ սոցիալիստական պետությունը կատարում էր միայն բաշխիչ-կառավարիչ ֆունկցիա: Ըստ սկզբունքի բացառվում էր պետական-արտադրական կառուցվածքներում որևէ անհատի կամ խմբի կողմից այդ հավելյալ արժեքի յուրացումը և դրա հաշվին հարստանալը: Այժմ «շուկայական» դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայում հավելյալ արժեքը նոր բուրժուազիայի և պետության կողմից յուրացվում է ամբողջովին, անվերադարձ՝ աշխատավորների կյանքը գոնե ինչ-որ չափով բարելավելու վերաբերյալ առանց որևէ հակադարձ պարտավորության:

Մխալ կլիներ կարծել, թե աշխատավորների և հարստահարվող այլ խավերի եկամուտները յուրացվում են հիմնականում ձեռնարկությունների կողմից և որ, ուրեմն, դրա մի մասը պիտի գնա արտադրության մեջ որպես հավելյալ շրջանառու կապիտալ, ծառայի արտադրության պահպանմանը և զարգացմանը, այսինքն տա օգտակար արտադրական էֆեկտ:

Առհասարակ, դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայում, գների շարունակական բարձրացման և դրամի արժեզրկման հետևանքով աշխատավորների շահագործումը՝ նրանց հավելյալ արժեքի անվերադարձ յուրացումը տեղի է ունենում ոչ միայն արտադրության, այլև՝ ամբողջ էկոնոմիկական պրոցեսում, սկսած արտադրության ոլորտից և վերջացրած բաշխման (շուկայական, ֆինանսական) ոլորտներով. արտադրության մեջ՝ որպես հավելյալ աշխատանքի յուրացում, շուկայում՝ որպես հավելյալ գնի յուրացում, ֆինանսական համակարգում՝ որպես հավելյալ տոկոսի յուրացում և այլն:

Այս էկոնոմիկայում, ապրանքային համատարած, շարունակաբար մեծացող դեֆիցիտի պայմաններում, բարձր գներ սահմանելիս որևէ մոնոպոլիստ, կարող են հանդես գալ ոչ միայն ինքը՝ պետական-արդյունաբերական-առևտրական-ֆինանսական մաֆիա, հանցագործ խումբ կամ ալյանս: Կարելի՞ է այդ ալյանսի մեջ գործող մարդկանց համարել հանցագործներ: Նրանց հանցագործ համարելն այն իրավագիտության տեսակետից, որը հարստանալը համարում է չարիք, կարելի է որ ճիշտ լինի: Սակայն այն իրավագիտության տեսակետից, որը հարստանալը չարիք չի համարում, ճիշտ չի լինի: Պարզապես, հարստանալու այլ միջոցներ, քան հակաէկոնոմիկական ճանապարհով աշխատավորների շահագործումը և բնակչության հարստահարումը դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկան չի առաջարկում. նրանք պարզապես զրկվում են հարստանալու այն միակ եղանակից, որ առաջարկում է այդ էկոնոմիկան:

Սակայն նույնիսկ այն իրավագիտության տեսակետից, որը հարստանալը համարում է չարիք, չի կարելի այդ ալյանսը անվանել մաֆիա կամ հանցագործ խումբ և համարել, թե տրված է երևույթի սպառիչ բնորոշումը: Հակաէկոնոմիկական եղանակներով հարստացող պետական, արդյունաբերական, առևտրական, ֆինանսական վերնախավերի այդ ալյանսը դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայի միջավայրում արտադրվող հենց այն կազմակերպված, միասնական և խոշորացող բուրժուազիան է, բուրժույների այն դասակարգը, որը երազում էին ունենալ «ռեմոկրատ-ռեֆորմատորները», որպես իրենց փայփայած «շուկայական» էկոնոմիկայի գլխավոր շարժիչ ուժը: Եվ տրամաբանական հակասության մեջ չընկնելու համար տրված հարցը պետք է վերաձևակերպել այսպես. դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկական միջոցներով հարըստացող պետական-արդյունաբերական-առևտրական-ֆինանսական վերնախավի ալյանսը պետք է համարել մաֆիա՞ կամ հանցագործ խո՞ւմբ, թե՞ պարզապես բուրժուազիայի դասակարգ:

Եվ քանի որ այդ ալյանսի մեջ ընդգրկված պետական-վարչական վերնախավը, որի տնտեսական քաղաքականությունից է կախված էկոնոմիկայի բնույթը, արդեն իսկ ընտանում է իր առատ եկամուտները և հարստանում է դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայի հակաէկոնոմիկական յուրացման մեխանիզմների միջոցով, այդ պետական-վարչական վերնախավը շահագրգռված էլ չէ այդ էկոնոմիկայի բնույթը վերևից փոխելու, այն որևէ այլ էկոնոմիկայով փոխարինելու մեջ, ընդհակառակը, վերածվում է այդ էկոնոմիկան պահպանելու, նրանում տեղի ունեցող դեստրուկտիվ պրոցեսները շարունակելու համար պայքարող գլխավոր պահպանողական ուժի:

Այստեղ մենք ականատես ենք լինում թե ինչպես դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկան, ինչպես և ամեն մի քայքայվող, տրոհվող օրգանիզմ, ինքն իր ներսում մշակում և իրագործում է իր իսկ քայքայվելու և մահանալու պրոցեսը պահպանելու, անդառնալի դարձնելու մեխանիզմներ: Դրանք ոչ թե կազմավորվող, ոչ թե ձևավորվող, այլ քայքայվող, մեռնող օրգանիզմում տեղի ունեցող դեստրուկտիվ և դեպի տրոհում տանող շարժումն անդառնալի դարձնող մեխանիզմներ են:

ՇՈՒԿԱ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հագեցած, ներազ ինֆլյացիոն էկոնոմիկայում, ինչպիսին ամենաբարձր զարգացած կապիտալիստական երկրների էկոնոմիկան է, գների մակարդակը յուրաքանչյուր տրվյալ ժամանակահատվածում որոշվում է հիմնականում միջին մասնայական սպառողի գնողունակությամբ: Այդպիսի էկոնոմիկայի դասակարգային կողմնորոշվածությունը, կարելի է ասել, տեղափոխված է հասարակության սոցիալական կառուցվածքի կենտրոնին մոտիկ:

Դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայում գնի վերին սահմանը որոշելիս, արտադրանքը, ապրանքը կամ արժեթուղթը միայն սահմանափակ, ոչ մասնայական քանակությամբ առաջարկելու հնարավորություն ունեցող ձեռնարկությունները, առևտրական ու ֆինանսական կառուցվածքները կողմնորոշվում են բնակչության ոչ թե լայն խավերի ցածր գնողունակությամբ, այլ հարստացող, ունևոր խավերի ամենամեծ ավելի բարձր գնողունակությամբ: Այս էկոնոմիկայի դասակարգային կողմնորոշվածությունը կտրուկ կերպով տեղաշարժված է դեպի աջ՝ դեպի հարուստների կողմը: Այս հանգամանքը, նախ, թույլ է տալիս ամեն անգամ գները բարձրացնել ավելի, քան բնակչության միջին ու ցածր եկամուտներ ունեցող խավերի գնողունակությունն է, այսինքն ամեն անգամ կատարել այդ գնողունակությունից առաջ անցնող գների բարձրացում և այսպիսով գործի դնել աշխատավորների շահագործման և բնակչության լայն զանգվածների հարստահարման մեխանիզմը: Ապա, այդ հանգամանքը կարևորագույնն է, որի շնորհիվ դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայի շուկան ինֆլյացիոն ամեն մի նոր փուլի հետ ավելի ու ավելի դեֆիցիտային և անմատչելի է դառնում միջին և ցածր եկամուտներ ունեցող, աղքատացող զանգվածների համար և՝ ավելի ու ավելի հագեցած ու մատչելի՝ այդ էկոնոմիկայի հարաբերություններում հարըստացող բուրժուազիայի համար: Ինքը՝ դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկան, այսպիսով, ինֆլյացիոն ամեն մի նոր փոփի հետ ավելի ու ավելի է վերածվում առավելապես հարստացող, ունևոր խավերի համար աշխատող էկոնոմիկայի. բնակչության միջին և ցածր եկամուտներ ունեցող, շահ-ագործվող և հարստահարվող ողջ զանգվածը, այսպիսով, աստիճանաբար օտարվում է հասարակության գոյություն պրոցեսից, դրվում է ռուսական բոմժերի կամ ֆրանսիական մարգինալների ապասոցիալականացված վիճակում:

Արդյունքում մենք ունենում ենք մի էկոնոմիկա, որն առավելապես աշխատում է ոչ թե իր հիմնական շարժիչ ուժի՝ աշխատավորների պահանջմունքները բավարարելու համար, մի բան, որը պետք է լինի ցանկացած կենսունակ էկոնոմիկայի գլխավոր հատկանիշը, այլ բնակչության մի այն մի մասի, որը, ընդսմին, համարյա ոչ մի մասնակցություն չի ունենում նրա բուն արտադրական պրոցեսին և հասարակական բարիքը յուրացնում է, գործելով գլխավորապես բաշխման համակարգերում և գլխավորապես հակաէկոնոմիկական եղանակներով:

Ինֆլյացիայի աճի հետ մեկտեղ, իրենց սոցիալական վիճակով հակադիր խավերի համար դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայի և նրա շուկայի բնույթի այս դիալեկտիկական երկվությունն ավելի ու ավելի է արվում, ավելի ու ավելի որոշակիորեն դրսևորելով այդ էկոնոմիկայի և նրա շուկայի հակասական, դասակարգային էությունը:

ՇԱՐՈՒՆԱԿ ՀԱՐՍՏԱՑՈՂ ԵՎ ՕՐԵՑՕՐ ԱՂՔԱՏԱՑՈՂ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱ

Այստեղ մեզ համար շատ կարևոր է հասկանալ մի հանգամանք: Եթե մենք ապրում ենք կապիտալիզմին անցնելու ժամանակաշրջան, ապա մենք ապրում ենք կապիտալիզմի ձևավորման մերկանտիլիստական ժամանակաշրջանը, երբ հարստանում են գլխավորապես առևտրական և ֆինանսական բուրժուազիան: Մինչդեռ, գերազանցապես սեփական երկրի ներսում սեփական աշխատավորներին շահագործելու միջոցով շահույթներ ստացող մեր էկոնոմիկայում և հասարակության մեջ ստեղծվել է մի իրավիճակ, երբ մի կողմից՝ ինտենսիվացված շահագործման և հարըստահարման հետևանքով բնակչության հիմնական զանգվածը համարյա հասցված է ծայր աղքատության, նրա շահագործվելու և հարստահարվելու ռեզերվները համարյա սպառված են. եկամուտների և գների միջև տարբերության հետագա ածը ոչօգուտ գների՝ արդեն իսկ հասել է մեր ազգային գոյության համար ընդունելի չափերի. մյուս կողմից՝ նոր ձևավորվող մերկանտիլիստական բուրժուազիան արտադրության փլուզման և պահանջարկ չգտած աշխատավորին մնում է իր գոյությունը պահպանելու համար դիմել ոչ աշխատանքային, ըստ էության հանցավոր, միջոցների: Դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկական միջավայրը, ուր հասարակական բարիքի բաշխումը կատարվում է գլխավորապես հակաէկոնոմիկական եղանակներով, այս հարցում նրան ընձեռում է մեծ հնարավորություններ: Ոչ աշխատանքային, հակաէկոնոմիկական յուրացումը դառնում է դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկայում անհատի գոյությունը ապահովող հիմնական վարքը: Անձի հոգևոր-բարոյական դեգրադացիան դառնում է անխուսափելի օրինաչափություն: Ըստ էության տարբերություն չկա այդ էկոնոմիկայում իր աշխատանքով վաստակելու հնարավորությունից զրկված և հարկադրված հանցագործության ճանապարհը բռնած գործազուրկի, ապասոցիալականացված անհատի սոցիալական վարքի և հակաէկոնոմիկական (հանցագործ) միջոցներով հարստացող նոր բուրժուազիայի * սոցիալական վարքի միջև:

Դեֆիցիտային-ինֆլյացիոն էկոնոմիկան այստեղ ևս գործում է, հանդես բերելով իրենում քայքայման, տրոհման պրոցեսները պահպանելու զարմանալի ունակություն. ինքը իր ներսում արտադրում է գործազուրկների, օտարվածների զանգվածներ, աղքատանալու, քաղցից մահանալու սպառնալիքի տակ ընդունց վարժեցնելով, դարձնելով իր հակաէկոնոմիկական միջավայրում գործելու ընդունակ:

(Շարունակելի)

ՏԵՍԱԿԵՏ

Երբ լռում են տնտեսագետները, ձայն են վերցնում հրապարակախոսները

Այսպես կոչված «շուկայական հարաբերություններին» անցնելու ներկա դժվարին ժամանակաշրջանում առնվազն տարօրինակ է թվում մեր տնտեսագետների, սոցիոլոգների, հասարակագետների անտարբերությունը բնակչության սոցիալական պաշտպանության հարցերի նկատմամբ: Մինչդեռ, բնակչության սոցիալական պաշտպանությունը ներկայումս ըստ էության մեր ազգային գոյության պաշտպանությունն է, ազգի բնապահպանությունը:

Տպագրելով գրող-հրապարակախոս Կամարի ՏՈՆՈՅԱՆԻ հոդվածը, որում, մեր կարծիքով, տրվում է առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի համակողմանի վերլուծությունը, խմբագրությունը նպատակ ունի հրավիրել մեր մասնագետ գիտնականների ուշադրությունն այդ հարցերի վրա և թերթի էջերում սիրով տեղ տալ նրանց ելույթներին: Մեր նախորդ երկու համարներում տպագրված բանավիճային հարցաթերթիկը հասցեագրված ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտին, մնաց անպատասխան: Դե ինչ, երբ լռում են տնտեսագետները, մենք ձայնը տալիս ենք հրապարակախոսներին: Փառք Աստծո, նրանք դեռ չեն լռում:

Ա Ր Ա Ն Ց ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՎԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ է արդարությունն ու բարոյականությունը: Այդ հարցը մշտնջենական է, զբաղեցրել է հներին, զբաղեցնում է նաև մեզ: Վերջերս հայ գրողներից Ջորայր Խալափյանը արտահայտեց իր մտորումները բարոյականության շուրջ, դիտողությունների նյութ ընտրելով 4-րդ դ. հայոց պատմության հանրահայտ դրվագի հերոս Մամիկոնյան իշխան Սամվելին (տես «Նոր պատմ», 1994, թիվ 11):

Մինչև Սամվելի բարոյական կերպարի մեկնաբանումը հոդվածագիրը նախադրում է յուրատեսակ ներածական, ընդհանուրից մոտենալով մասնավոր կերպարին:

Արդարությունը լայն հասկացություն է, միաժամանակ ներ անձնական, գրում է հեղինակը: Բազմաթիվ էթիկական հասկացությունները (հավասարություն, ազատություն, ճշմարտություն, արդարություն և այլ) կապված են միմյանց հետ, այդ հասկացությունները մեր ներքին էության (ըստ հեղինակի՝ ներքին տիեզերքի) անբաժանելի հատկանիշներն են:

Դրանցից հոդվածագիրը առանձնացնում է երկուսը՝ արդարությունն ու բարոյականությունը: Ըստ իրեն նրանց չվրա են խարսխված հասարակական օրենքները: Դատաստանագրքերն ու օրենսգրքերը ճգնում են պատասխան տալ հետևյալ հարցին՝ աբդարությունը մի՞շտ է բարոյական և բարոյականությունը մի՞շտ է արդար:

Խնդրո առարկա հարցը պարզաբանելու համար հոդվածագիրը փորձում է պարզաբանել Կոնֆուցիոսի ասքով, ըստ որի ուսուցիչն ու աշակերտը նույն արարքին մոտենում են լրիվ հակադիր դիրքերից (այդ մասին ստորև):

Հիշենք Պավլիկ Մորոզովին, շարունակում է հեղինակը: Պիոները մտնել է ծնողների՝ հանում տիրող գաղափարախոսության շաների և այդ վարքի համար արժանացել է հուշարձանների և այլ մեծարանքների: Սակայն, Կոնֆուցիոսի ասքից և Պավլիկ Մորոզովի արարքից մեզ առավել հարազատ է Սամվել Մամիկոնյանի պատմությունը, որի մասին Բաֆֆին գրել է հայտնի վեպը:

Ո՞վ է Սամվել Մամիկոնյանը: Բոլորիս քաջ հայտնի կերպար՝ հին հայկական հոչակավոր տոհմի ներկայացուցիչ, որը հայրենասիրությունից դրդված սպանել է դավաճան ծնողներին:

Հիրավի, գրում է Ջորայր Խալափյանը, սոսկալի ոճրագործություն՝ հանում հայրենիքի սպանել հորն ու մորը, ապա ողջ մնալ: Հայրենասեր և ծնողասպան, մեկը մյուսին բարոյապես ոչնչացնող հասկացողություններ:

Սամվելը, շարունակում է քննադատը, մեր մատենագրության Էդիպուս արքան է, սա ևս սպանեց հորը, մոր մահվան պատճառ դարձավ: Բայց երբ իմացավ, «իր ակամա հանցանքը», ինքն իրեն կուրացրեց, դրանով իսկ իրեն դատապարտելով մահից առավել տառապանքների («ահա ծնողասպանության պատիժը»), միևնույն մեր Սամվելը մնաց ապրելու, միայն փախավ Խաղտիք՝ «Ինչո՛ւ և ումի՛ց, և ինչպես կարողացավ ապրել այնուհետ»: Մատենագիրը ոչինչ չի ասում այս արտառոց դեպքի ընթացքի մասին:

Սամվելի, Էդիպուս արքայի և Պավլիկ Մորոզովի կերպարների զուգահեռներին կանդրադառնանք ստորև, այժմ կետ առ կետ մեկնաբանենք հոդվածագրի քննադատական դիտողությունները Սամվելի բարոյական կերպարի շուրջ:

Եթե այդքան խորն էր ազդված, գրում է քննադատը, միթե այլ ելք չգտավ, քան ամենամեծ հանցանքը, որին ընդունակ է մարդը:

Մեղադրանքը տեղին չէ. պատմիչները հաղորդում են միայն դրամայի ավարտը: Բայց դրաման անշուշտ հասունացել է աստիճանաբար և ունեցել է իր զարգացումը: Չէր կարող պատահել, որ Սամվելը չփորձեր ետ պահել ծնողներին՝ համոզել, վիճել, սպառնալ, բայց ապարդյուն: Ուստի այլ ելք չի ունեցել:

Այնուհետև՝ ծնողից հետո գալիք է քեզ ծնող ժողովուրդը, մի՞թե կարելի է սպանել ժողովրդին՝ հանուն հայրենասիրության, աճա ինչ իմաստազրկության է հանգում «արդարացված ոճիրը»: Սամվելի ձեռքից այդքանն է գալիս, բայց ե՞րբ, որտե՞ղ և էլ ի՞նչ ձևով էր ապացուցել իր հայրենասիրությունը, մասնակցե՞լ էր, արդյո՞ք, որևէ ճակատամարտի, մեկ այլ ձևով դրսևո՞րվել էր նրա քաջությունը, հարց է տալիս քննադատ-հոդվածագիրը:

Կպատասխանենք՝ իհարկե դրսևորվել էր: Այդ մասին ուղղակի վկայություն կա պատմիչ Փավստոս Բուզանդի մոտ:

360-ական թթ. երկրորդ կեսը հայ-պարսկական անվերջ պատերազմների շրջան էր, պարսից շահ Շապուհը ամեն գնով ձգտում էր ենթարկել Հայաստանը, իսկ հայերին պարտադրել զրադաշտականությունը: Պարսիկներին գործակցում էին պարսկական կողմնորոշում ունեցող հայ իշխանների մի մասը:

Հակամարտությունը տևական էր, զոհվեցին Արշակ Բ և նրա որդի Պապ թագավորները: Պապի հաջորդ՝ Արշակ Գ-ն մանուկ էր, երկիրը նրա անունից կառավարում էր մայրը՝ Զարմանդուխտը, իսկ փաստացի՝ սպարապետ Մանվել Մամիկոնյանը: Վերջինը նպատակ էր դրել մաքրել երկիրը նվաճողներից և անպայման սպանել պարսկամետների պարագլուխ Մերուժան Արծրունուն, որը Շապուհի դրածոն էր, ընդունել էր զրադաշտականությունը և ձգտում էր թագավորել Հայաստանում:

Մանկատամարտերից մեկում սպարապետ Մանվելին ի վերջո հաջողվում է սպանել Մերուժանին: Պատմիչ Փավստոսը գրում է, որ նրա գլուխը Մանվելը բերում է տիկնոջ (թագուհու) բանակը, իսկ Սամվելը Մանվելին չպատահեց, որովհետև «դարձաւ նա ի բանակն» (տես Փավստոս Բուզանդ, Հայոց պատմութիւն, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի, Եր., 1987, էջ 388):

Թագուհու բանակում եղած կանայք, երբ տեսան Մերուժանի գլուխը, մեծ ճիչ ու աղաղակ բարձրացրին, որովհետև կարծեցին, թե այն գլուխը Սամվելինն էր, որովհետև այդ երկուսը իրար նըմանման էին: Բայց հետո իմացան, որ Սամվելինը չէ, այլ Մերուժանինը, բայց ասացին՝ «Այնուամենայնիվ, դա էլ մեր եղբայրն էր» (նույնը, էջ 389):

Պարզ և շատ որոշակի վկայություն, որ Սամվելը Խաղտիքից կարճ ժամանակ անց վերադարձել էր Հայաստան և Մանվել Մամիկոնյանի բանակում կռվում էր պարսիկների դեմ: Տարօրինակ է, որ քննադատ-բարոյախոսը ուշադրություն չի դարձրել այդ փաստի վրա:

Մյուս քննադատական դիտողությունը՝ հայրենասիրության գերագույն արտահայտությունն է սեփական կյանքի զոհաբերությունը: Սամվելն ուներ այդ հնարավորությունը, նրա ինքնասպանությունը կլիներ դավաճան հոր և ուրացող մոր բարոյական դատավճիռը: Բայց նա իրեն պահեց սեփական կյանքը և հանուն հայրենիքի զոհաբերեց նույնպես շատ թանկ, բայց ոչ սեփական կյանքի արժույթով, հոր և մոր կյանքը: Դա ոճիր է, որքան էլ պատճառաբանված:

Նախ, հայրենասիրության բարձրագույն դրսևորումը ինքնասպանությունը չէ, գոյություն ունեն այլ բարոյական կատեգորիաներ՝ պայքար, զոհաբերություն մարտի դաշտում: Ինքնասպանությունը տվյալ դեպքում կլիներ թուլակամի անիմաստ և անօգուտ քայլ: Նա զոհաբերեց հոր ու մոր կյանքը, բայց պետք է ճշտել՝ հայրենիքին դավաճանած հորը ու մոր... Իսկ իր սեփական կյանքը նա գերադասեց «պահել իրեն» կռվելու թշնամիների դեմ, այն թշնամիների, որոնք (այդ թվում և իր հայրը՝ Վահան Մամիկոնյանը) հարյուրներով կամ հազարներով ոչնչացնում էին Սամվելի հայրենակիցներին և ավերում հայրենիքը: Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի ոճրագործությունների մասին Փավստոսի «Պատմությունում» կան պերճախոս վկայություններ: Գլուխներից մեկը վերնագրված է՝ «Վահանի և Մերուժանի մասին, թե երբ հայոց աշխարհում մնացին, որքան շատ չարիքներ գործեցին աշխարհին և ինչպես Վահանն ու իր կինը սպանվեցին իրենց որդու ձեռքով» (չորրորդ դպրության, գլ. ծթ): (Շարունակելի)

«Նյու Յորք թայմս» թերթը տպագրել է Ռիլյամ Բրոդի «Խորհրդային ջրածնային ռումբի ստեղծման գործում լրտեսի դերը ոչինչ է» վերնագրով հոդվածը, որում ասվում է.

Միջուկային փորձագետները եկան այն եզրակացության, որ Խորհրդային Միությունը ոչինչ չիմացավ այն մասին, թե ինչպես պատրաստել ջրածնային ռումբը՝ ատոմային լրտես Բլաուս Ֆուքսից, այլ, հնարավոր է, որ այդ կարևորագույն գաղտնիքը հաշվարկեց, վերլուծելով ամերիկյան միջուկային պայթյուններից հետո ռադիոակտիվ տեղումները:

Այժմ այդ մասնագետները գտնում են, որ դոկտոր Ֆուքսը՝ անգլիական քաղաքացին, Խորհրդային Միությանը հանձնել էր ջրածնային ռումբի վերաբերյալ տվյալները, չիմանալով, որ դրանք բոլորովին սխալ էին: Պատմական տվյալների լույսի տակ վերանայելով այդ խնդիրը, նրանք այդ սխալ տվյալների մի զգալի մասը վերագրում են դոկտոր Էդվարդ Թելլերի աշխատանքների սկզբնական փուլին, ինչպես նաև ենթադրում են, որ այդ հայտնագործման հիմնական գաղափարների երեքից երկուսը ծագեցին դոկտոր Ստանիսլավ Ուլամի աշխատանքներից՝ մի մաթեմատիկոսի, որը մեծ դեր էր խաղում Նյու Մեքսիկո նահանգի Լոս Ալամոսյան լաբորատորիայում: Ֆիզիկոս, դոկտոր Թելլերը, որը նույնպես աշխատել է Լոս Ալամոսում, և որին հաճախ անվանում են ջրածնային ռումբի «նախահայր», ավելացրեց երրորդ գաղափարը, որը և որոշեց հայտնագործության հաջողությունը:

Ջրածնային ռումբի ստեղծման պատմության այդ կարևոր վերահիմաստավորումը բխում է տարբեր գիտնականների աշխատանքներից, որոնք զգալի չափով աշխատում էին միմյանցից անկախ: Միջուկային փորձագետներ Դենիել Հերշը և Ռիչյամ Մեթյուսը, Ֆուքսի և տեղումների խնդրի մասին գրել են «Բուլետին օֆ ատոմիկ սայենթիստ» ամսագրում: «Այժմ պարզ է, որ Ֆուքսին հայտնի «գաղտնիքները» ջրածնային ռումբի մասին, ավելի քան անօգուտ էին»,— գրում են Հերշը և Մեթյուսը: Ջրածնային ռումբում միացվում են թեթև ատոմները, սովորաբար ջրածնի իզոտոպները, իսկ նրանց սինթեզն արտադրում է էներգիա, որը պարունակվում է ատոմային միջուկներում: Ջրածնային ռումբերը սովորաբար ավելի հզոր են, քան ատոմային ռումբերը, որոնք ճեղքում են ծանր ատոմները և արտադրում միջուկային էներգիան այն գործընթացում, որը հայտնի է որպես տրոհման ռեակցիա: Սինթեզի ռեակցիան ավելի արդյունավետ է, քան տրոհման ռեակցիան: Այդ պատճառով էլ գիտնականները, որոնք փորձում էին ստանալ սինթեզի ռեակցիան 40-ական և 50-ական թվականների սկզբին, իրենց ռումբն անվանում են «գերռումբ»:

Դոկտոր Ֆուքսին, որը համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ աշխատում էր Մանհեթեն նախագծի վրա, հաճախ էին վերագրում Խորհրդային Միությանը ջրածնային ռումբի գաղտնիքի փոխանցման ծառայությունը: Նա որոշակիորեն փորձում էր այդ կատարել, հանձնելով ջրածնային ռումբի մասին առաջին ենթադրությունները: Դոկտոր Ֆուքսի խոստովանումը, որը կատարեց 1950 թվականի հունվարին անգլիական իշխանություններին այն մասին, որ ինքն աշխատել էր Խորհրդային Միության օգտին և ընդառաջ հանձնել ատոմային ու ջրածնային ռումբերի գաղտնիքները, ազդեցին 1950 թվականի մարտին նախագահ Հարի Թրումենի որոշումը՝ արագացնել ջրածնային ռումբի ստեղծումը:

Աշխարհում մի փոքր տնակի չափով առաջին ջրածնային ռումբը Միացյալ Նահանգների կողմից պայթեցվել էր 1952 թվականի նոյեմբերի 1-ին՝ Խաղաղ օվկիանոսում մի փոքր կղզու վրա: Այդ կղզյակը՝ մեկ մղոն տրամագծով, պայթյունից հետո անհետացավ: Այդ ռումբի հզորությունը 700 անգամ ավել էր Հիրոսիմայի վրա նետած ռումբից: Խորհրդային Միությունն իր առաջին լիամասշտաբ ջրածնային ռումբը պայթեցրեց 1955 թվականին: Այսօր աշխարհի միջուկային զինանոցների զենքի հսկայական մեծամասնությունը կազմում են ջրածնային ռումբերը, որոնց մեծամասնությունն ավելի հզոր է, քան ատոմային առաջին ռումբերը:

ՋՐԱԾՆԱՅԻՆ ՌՈՒՄԲԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆՈՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՔ ՀԵՂԻՆԱԿ... ԵՐԵՔ ՎԱՐԿԱԾ

ԲԱՑՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՎԱՐԱԳՈՒՅՐԸ

Ջրածնային ռումբի ստեղծման նոր պատմությունը նոր թափ ստացավ, երբ դոկտոր Հերշը՝ այն ժամանակ Սանթա Բրուսում Կալիֆորնիայի համալսարանի միջուկային քաղաքականության ծրագրի տնօրենը, տեղեկատվության ազատության մասին օրենքի համաձայն, ստացավ 1952 թվականին ֆիզիկոս Հանս Բետեի կողմից գրած ջրածնային ռումբի տեխնիկական գաղտնի պատմության գաղտնազերծված վարկածը: Թեպետ և գրաքննության կողմից խիստ աղճատված, այնուամենայնիվ, այն պարունակում էր ակնարկներ, որոնք դոկտոր Հերշին և այլ գիտնականների դրդեց տեղեկագիր կերպով թերթել գրականությունը և հարցադրել այն ֆիզիկոսներին, որոնք հիշում էին ջրածնային ռումբի ստեղծման մանրամասնությունները:

«Բուլետին»-ում տպագրված հոդվածում մանրամասն ընկարագրվում են այն սխալները և մոտավոր հաշվարկները, որոնք սկզբում խանգարում էին ԱՄՆ-ում ջրածնային ռումբի ստեղծման ծրագրի իրականացմանը և որոնց մեծ մասը անում էին դոկտոր Թելլերը և նրա գործընկերները՝ Լոս Ալամոսում:

Դոկտոր Ֆուքսն այդ զենքի ստեղծման ամերիկյան ծրագրում դադարեց աշխատել 1946 թվականին և ուստի մուտք ուներ ջրածնային ռումբի ընտեղծման միայն սխալ գաղափարներին մինչ այն, երբ նրա իրական ստեղծման համար կատարվեց մեծ ցատկ:

Թեպետ Միացյալ Նահանգները ջրածնային ռումբը մասամբ ստեղծեցին այն պըճդումների արդյունքում, որ Ֆուքսը դրա գաղտնիքը փոխանցել էր Խորհրդային Միությանը, այնուամենայնիվ, նա կարող էր հանձնել միայն Լոս Ալամոսում Թելլերի խմբի սխալ նախադրյալները և ոչ լրիվ հաշվարկները,— գրում են Հերշը և Մեթյուսը:

Հոդվածում բերվում են դոկտոր Բեթի խոսքերը, որը գտնում է, որ Խորհրդային Միությունը ջրածնային ռումբի գաղտնիքն իմացավ, վերլուծելով ռադիոակտիվ տեղումները: «Ես դա ապացուցել չեմ կարող»,— ասաց Բեթեն: Դոկտոր Բեթեն նույնպես ենթադրեց, որ Անդրեյ Սախարովը, որին հաճախ վերագրում են խորհրդային ջրածնային ռումբի ստեղծման պատիվը, ճշմարտությունը գիտի, «սակայն մտադիր չէ այն մեզ բացահայտել»: Դոկտոր Սախարովը մահացավ 1989 թվականի դեկտեմբերին:

Դոկտոր Հերշը հարցազրույցում հայտնեց, որ դոկտոր Սախարովին մի անգամ հարցրել էին ռադիոակտիվ այդ տեղումների մասին, և նա բացատրեց, որ նրանք Խորհրդային Միությանը հուշել էին, թե ինչպես ստեղծել ռումբը: Այնուամենայնիվ, նա ասաց, որ Խորհրդային Միությունը մեծ հետաքրքրությամբ վերաբերվեց դրան:

Ջրածնային ռումբի ստեղծման պատմության վերանայումը ընդգրկում է նաև այն հարցը, թե ում պետք է պատկանի նրա հայտնագործման նախապատիվը: Այդ հարցը քննարկվում է վաղուց, սակայն նրա լուծմանը խանգարում էին կառավարական գաղտնիությունը: Հենց ի սկզբանե այդ պատիվը՝ իսկ, գուցե, մեղքը՝ ըզգալի չափով վերագրվում էր դոկտոր Թելլերին: «Նյուսուիկը» 1954 թվականին նրան անվանում էր «խորհրդավոր մարդ», որը կանգնած է ջրածնային ռումբի հետևում: 1954 թվականին լույս տեսած Ջեյմս Շեպլիի և Բիլլ Բլերի «Ջրածնային ռումբը» գրքում դոկտոր Թելլերին նվիրված է մի խանդավառ հոդված և միայն իմիջիայլոց է հիշատակվում դոկտոր Ուլամը: Ինքը՝ Թելլերը, այդ խոստովանում է ջրածնային ռումբի պայթյունային սարքավորման և ջրածնային ռումբի տեղադրումն այնպես, որպեսզի հասնել սեղմմանը: Իսկ այնուհետև դոկտոր Թելլերը ավելացրեց երրորդ գաղափարը: Նա առաջարկեց, որպեսզի վառելանյութի սեղմումը տեղի ունենա ռումբից ստացված ճառագայթումից, այլ ոչ թե մխանիկական հարվածից: 1951 թվականի մարտի 9-ին երկու գիտնականները ներկայացրեցին մի զեկուցում, որում շարադրեցին այդ երկու այլընտրանքները: Դոկտոր Թելլերի կողմից այդ գաղափարի շարադրումը հանդիսացավ ատոմային ԱՄՆ-ի ջրածնային ռումբի ընտեղծման ծրագրի հաջողության հիմքը: Սպառազինման բնագավառի փորձագետներն ասում են, որ դոկտոր Ուլամի գաղափարը նույնպես կաշխատեր, սակայն նա ավելի մեծածավալ էր: Կառավարությանը երբեք չէր հայտնել, թե այդ գաղափարը երբևիցե փորձարկվել էր պայթեցումով:

Ռումբի ստեղծման այդ նոր պատմությունը շարադրում են «Բրիտանիկա» հանրագիտարանում դոկտոր Բոբրենը և դոկտոր Նորիսը:

Պատրաստեց
Հենրիկ ԼԻԼՈՑԱՆԸ

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ՆԱ ԵՐԲԵՔ ՉԻ ԿՈՐՑՐԵԼ ՀՐԱՏԱՊՈՒԹՅՈՒՆԸ

Վրթանես Փափազյանը վաննեցի էր, հայ ժողովրդի պատմական, ազգային, քաղաքական ու մշակութային աշխանավոր կենտրոնից, որը դարեր շարունակ գտնվելով հայ ազատագրական շաժման կիզակետում, հայրենիքին տվել է գրականության, արվեստի, գիտության, հայրենասիրական շարժման բազմաթիվ սերունդներ: Վրթանեսի հայրը՝ ազգային գործիչ Մինասրոտ քահանան, նշանավոր մանկավարժ ու հասարակական գործիչ էր, որի մոտ էլ՝ Ագուլիսում, ապա Թավրիզում նա ստանում է իր սկզբնական կրթությունը: 1881 թ. Փափազյանն ավարտում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, ապա գնում է Կոստանդնուպոլիս: 30-ական թվականների վերջին Փափազյանը ճանապարհորդում է Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում և գրում արևմտահայության կյանքին ու պայքարին նվիրված բազմաթիվ գործեր:

1891 թ. Փափազյանը մեկնում է արտասահման, սովորում է Ժնևի համալսարանի հասարակագիտական բաժանմունքում, ծանոթանում է բանվորական հարցին և սոցիալիզմի տեսությանը: 1895 թ., ավարտելով ուսումը և ստանալով գրականության ու հասարակական գիտությունների ֆակուլտետի դիպլոմ, կա վերադառնում է Կովկաս և նվիրվում գրական մանկավարժական գործունեության: «Արձագանք», «Մշակ», «Մասիս», «Մուրճ», «Տարազ», «Ազնտամարտ», «Ծովիդ» և այլ պարբերականներում լույս են տեսնում Ժափազյանի ակնարկները, զրույցներն ու վեպերը, որոնցում քննարկվում են ժամանակակից կյանքի պրոբլեմները:

Փափազյանի կյանքը հենց սկզբից մի կատարյալ ոդիսական էր: Այդ մասին Ստեփան Զորյանը գրել է, որ նրա գրական գործունեությունն ու կյանքը մի երկար, փշոտ, խաչակիր ճանապարհ էր, մի անտուն, անկապան դերվիշի կյանք, «Գյուղից-գյուղ, քաղաքից-քաղաք, աշխարհից աշխարհ. տեսնում ես նրան մեկ մեծ ճանապարհներից կտրված, լեռնոտ Ագուլիսում, մեկ՝ մշուշապատ Կոճդոնում, մեկ՝ մոխրապատ Նրևանում, մեկ էլ հոյակապ շլացուցիչ Փարիզում: Կ. Պոլիս, Ժնև, Բեռլին, Թեհրան, Բուխարեստ, Վիեննա, Մոսկվա, աշխարհի գրեթե բոլոր մեծ ու փոքր քաղաքների մայթերը մաշել է նա:

Փափազյանն ուներ բողոքող ըմբոստ ոգի և՛ կյանքում, և՛ ստեղծագործություններում: Թուրքական կառավարությունը նրա ակատմամբ մաևվան վճիռ էր կայացրել, հետապնդվել էր նաև ցարական կառավարության կողմից, ենթք անգամ դատապարտվել սանտարկության: 1899 թ., «Բյուզանդիոն ւմ» տպագրված «Գրական թղթակցություններ» հոդվածաշարքում Փափազյանը մերկացնում է «Կովկաս» թերթի խմբագիր Վելիչկոյի և Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինի հայատյաց քաղաքականությունը, որի հետևանքով փակվել էին հայկական դպրոցները:

Փափազյանի կյանքն ու ստեղծագործությունը ներծծված է աննկեղծ հայրենասիրությամբ, իր ժողովրդի պատմության ու գրականության, պատմական հերոսների անկատմամբ ջերմ սիրով:

«Այծեմնիկ» դրամայում Փափազյանը ներկայացնում է Հայոց պատմության հերոսուհիներից մեկի՝ Այծեմնիկի սխրանքը: 1125 թ. Անի քաղաքը սելջուկներից պաշտպանելու ժամանակ մահամերձ Այծեմնիկը, դիմելով հայ զինվորներին, ասում է.— «Ես կռվեցի և մեռնում եմ աճա ուրախ... գիտեք լավ մեռնել, ժպտալով մեռնել, անձնատուր չլինեք... կռվեք մինչև վերջին շունչը: «Հայրենիքի համար» պատմական թատերախաղի թեման Վարդանանց պատերազմն է: Վարդան Մամիկոնյանի և Վասակ Սյունու հարաբերությունները, վերադառնալով պարսկական Հազկերտ թագավորի մոտից, Վարդան Մամիկոնյանը դիմելով հայ իշխաններին, ասում է. «Թոթափեք այն մուրը, որ Տիգրոնից աղտոտում է մեր դեմքը... Բարձրացնենք մեր գլուխը հպարտությամբ: Նայենք մեր շուրջը և կուզենանք մեռնել բարձրության վրա»: Պիեսի վերջին գործողությունը պատկերում է Ավարայրի ճակատամարտում գերված հայ զինվորների աքսորը Տիգրոն: Նրանք դեպի մահ են գնում, բայց արի ու անընկճելի, հպարտությամբ են կրում իրենց խաչը: Ղևոնդ երեցը խորը համոզվածությամբ ասում է. «Կգա, հետու չէ այն օրը, երբ կխորտակվի բռնակալի գահը և կփշրվի նրա զորությունը... Եվ քարը քարի վրա չի մնա այդ արյունարբու պետությունից»:

1909 թ. Կոստանդնուպոլսում լույս է տեսնում Վրթանես Փափազյանի «Հաջի բեկ» վեպը՝ նվիրված Երզնկայի բանտում 1905 թ. զոհված հայ հեղափոխական Գալուստ Արխանյանի հերոսական կյանքի էջերին: Վեպի գործողության վայրը Երզնկա գավառի Մընձուր գավառակն է: Բնութագրելով հայ ազատագրական շարժման առաջին քայլերը, պարզելով իր վեպի իմաստը, Վ. Փափազյանը նշում է, «Որքան և տհաս թվի ազատության երկարատև կռվի այդ առաջին քայլը, նա, իր ամենայն պարզությամբ ու բաղձանքներով՝ վսեմ ու ազնիվ է հենց նրա համար, որ առաջին քայլն է, ազատության համար պարզված դրոշի ծածանման առաջին րոպեն...»:

Ազատագրական պայքարը Ավարայրից շարունակվելով Սարդարապատ՝ ժառանգվել է արցախյան հերոսամարտին. և այդ բոլոր դյուցազնամարտերի հերոսները անմահ են հայ ժողովրդի սրտում: Հայ գրողները, պատմաբանները, գեղանկարիչներն ու քանդակագործները, ինքը՝ ժողովուրդը կերտել են հայ ազատամարտիկների անմահ կերպարները:

Բեղմնավոր է եղել Փափազյանի գործունեությունը Արցախում 1910—12 թթ. Շուշու թեմական դպրոցում նա դասավանդում է հայերեն, գրականություն, պատմություն, տրամաբանություն, միաժամանակ գրաղվում է ազգային քաղաքական գործունեությամբ, գրում է գեղարվեստական մի շարք երկեր,



Հովհաննես Թումանյանի և Ղազարոս Աղայանի հետ միասին կազմում է «Հայ գրողների անթոլոգիան», հրատարակում է, «Պատմություն հայոց գրականության՝ սկզբից մինչև մեր օրերը» գիրքը, որ հայ գրականության ամբողջ պատմությանը նվիրված առաջին աշխատությունը էր, խմբագրում է Շուշիում լույս տեսնող «Ղարաբաղ» շաբաթաթերթը, ուր տպագրվում են նրա բազմաթիվ հոդվածները՝ հայ գրականության, հասարակական կյանքի մասին: 1911 թ. Շուշիում լույս է տեսնում Փափազյանի «Զրույցներ» ժողովածուն:

1919 թ. Փափազյանը պաշտոնավարում էր որպես Վաղարշապատի միջնակարգ դպրոցի տեսուչ: 1920 թ. ապրիլի 11-ին նա հոգեհանգիստ է կազմակերպում Մեծ եղեռնի զոհերի հիշատակին: Ականատեսները պատմում են, որ գրողը արցունքն աչքերին հաղորդում էր, որ եղեռնի նահատակներից շատերը իր շատ սիրելի գրչակից եղբայրներն էին, նրանց մեջ էր նաև իր հարազատ եղբայրը:

Փափազյանը գրել է. «Վիպասանի կամ բանաստեղծի պարծանքն է, երբ ժողովուրդը կարդում է նրա գրվածքները, ըմբռնում, օգտվում է նրանից, կրթվում, զարգանում...»: Այդպիսին էր ինքը՝ Փափազյանը, որի գրվածքները միայն 30—70-ական թվականներին, երեվանում լույս են տեսել երեք ժողովածուներով, տասնյակ հազարավոր տպաքանակով, որոնք կարդացվում են լարված հետաքրքրությամբ, դաստիարակում ընթերցողներին հայրենասիրական ոգով: Դասականները երբեք չեն կորցնում իրենց հրատապությունը

Այստեղով անցել է Տիգրան Մեծը

Նվաճողները լինում են երկու տեսակ՝ թալանչի-ավերիչներ և կառուցողներ։ Երբ չվեդական Թագավորը գրավեց էստոնական Տալլին քաղաքը, նա կառուցեց վարչական կենտրոնը, որն այսօր էլ էստոնացիների հպարտությունն է։ Անգլիացիները իրենց նվաճած հողերում հիմնում էին գործարաններ ու նավահանգիստներ, կառուցում էին պալատներ։ Մեր պատմությանն էլ ծանոթ են շատ նվաճողներ... Ավա՜ղ, նրանք բոլորը առաջին տարբերակին էին պատկանում։ Բայց ահա՝ սիրիացիները դժգոհելու առիթ չունեն. Հռոմեացի նվաճողներից Ավգուստինիոս կայսրը, նվաճելով Սիրիան, կառուցեց Բաալբեկ-Հելեպ մարմարապատ ճանապարհը, նաև՝ Պալմիրա քաղաքը։

Սիրիան գարձավ հելլենիստական մշակույթի կենտրոններից մեկը։ Միջնադարից մինչև այսօր պատվում է Համմայի հայտնի անիվը (լուսանկար № 1) ոռոգման եզակի կառույցը։ Իսկ Հալեպի միջնաբերդը մեզ հետաքրքրում է նաև նրանով, որ այնտեղ 83 թ. Սիրիան գրավելիս, այցելել է հայոց մեծ արքան՝ Տիգրան Մեծը և միջնաբերդի մինչև օրս կանգուն սրահներից մեկում մինչև օրս պահպանված քարին կանգնելով, խաղաղության և բարգավաճման հորդորանքներով դիմել է հալեպցիներին (ասում են) ... Հետո Տիգրանը անցել է այս կամրջով (լուսանկար № 2) և շարունակել իր արշավը դեպի Փյունիկիա, գրավելով Արևելյան Միջերկրածովքը։

ԱՆՀԱՎԱՆԱԿԱՆ Է, ԲԱՑԾ...

Երաժշտական թերապիան ձայնադարան չէ

Երաժշտությամբ բուժումը վերջին շրջանում մեծ տարածում է գտել բժիշկների շրջանում, որոնք նշում են այդ մեթոդի բարերար ազդեցությունը, թե՛ բուժման ընթացքի և թե՛ հիվանդի հոգեկան-զգացմունքային վիճակի վրա։ Ըստ որում հաստատված է, որ բուժման հաջողությունն ուղղակիորեն կախված է երաժշտության բնույթից։ Երաժշտության դրական կամ բացասական ազդեցությունը կարելի է որոշել ընտրած երաժշտության ոճը ու նրա ընդվագույն ազդեցությունը հաշվի առնելով։

Մեծ նշանակություն ունի երաժշտության ազդեցության աճհատականությունը։ Մեկի մոտ, ասենք, Բեթհովենի սոնատը կարող է առաջացնել անդորր, հանգստություն, մյուսին, ընդհակառակը, կարող է գրգռել, ջղագարության դեպքում կարող է սկսվել նոր նոպա։

Երկրորդ աշխարհամարտից անմիջապես հետո, ԱՄՆ-ում ստեղծվեց բժիշկ-երաժշտական թերապևտների գիտաճետազոտական ընկերություն, որը սկսեց գործել Վալտեր Ռիդի հոսպիտալին կից։ Այժմ ամենուրեք նյարդահոգեբուժական բաժանմունքներում կիրառվում է անհատական կամ խմբակային երաժշտական թերապիա։ Ամերիկայում գործում են հատուկ կինհիկաներ՝ Կանզասում և Միչիգանում։ 1950-ին ստեղծվել է երաժշտական թերպևտների Ազգային ասոցիացիա, որը համախմբում է երաժշտական և հոգեբուժական կրթություն ունեցող բժիշկներին։ Այդ ասոցիացիան տարբեր համալսարաններում կազմակերպել է հատուկ խմբեր՝ մասնագետներ պատրաստելու համար։ Ներկայումս շուրջ 1500 բժիշկներ են պատրաստված, ովքեր մասնագիտացել են երաժշտությամբ բուժելու մեթոդի գծով։ Կալիֆորնիայում բուժման այդ ձևը պաշտոնապես օրինականացվել է և ներդրվել համարյա բոլոր բուժական հիմնարկներում։ Թերտլ Բեյ երաժշտական ուսումնարանը պատրաստում է մասնագետներ՝ երաժշտական թերապիայի գծով։

Իսկ կա՞ն, արդյոք, հաջողություններ, արդյունքներ այդ ուղղությամբ։ Համաձայն արդյունքների բուժման, այդ ձևը իրեն արդարացրել է տարբեր փսիխոզների բուժման ժամանակ, ինչպես նաև շիզոֆրենիայի ժամանակ, զուգակցելով բուժման երաժշտական և հոգեբանական միջոցները։ Հետաքրքիրն այն է, որ մեծ ազդեցություն ունեն տվյալ դեպքում գինվորական քայլերգերը ու ժողովրդական մեղեդիները։

Գիտնականները գտնում են, որ աղմկոտ թմբկահարումներըն ու կրկնվող աղմուկը հիվանդի մոտ առաջացնում են վիբրացիոն պատասխաններ ենթագիտակցությունում, հատկապես գլխուղեղի այն հատվածում, որտեղ կարգավորվում են գրգռիչ-դեպրեսիվ գործընթացները։ Հիվանդի վրա երաժշտության հոգեբանական ազդեցությունները կարելի է կարգավորել, ուսումնասիրելով մաշկի գալվանական ռեֆլեքսները, որոնք անմիջապես արձագանքում են երաժշտության որակի, տևողության ու ձայնի ուժգնությանը։ Հիվանդների վրա բարերար ազդեցություն են թողնում հատկապես երաժշտության խմբակային կատարումներն ու ունկնդրությունը, երբ հիվանդներից ոմանք նվագակցում են մյուս կատարողներին՝ բամկանին պարզունակ մակարդակով։ Նման կատարումները մարդկանց մտերմացնում են, նրանք դառնում են ավելի բարի, բարյացակամ և նույնիսկ ուշադիր միմյանց նկատմամբ։ Մեծ հաջողության են հասնում բժիշկները՝ հատկապես պրոֆեսիոնալ երաժիշտների բուժման ժամանակ, նրանց հանձնարարելով մենակատարումներ, խմբակային երգեցողություն կամ մասնակցություն նվագախմբերի աշխատանքում։ Պարերն ու երաժշտության տակ մարմնի ռիթմիկ շարժումները նույնպես ունեն բուժիչ ազդեցություններ։ Այդ ճանապարհով ընտրված երաժշտությունը բարձրացնում է հիվանդների տրամադրությունը, ախորժակը, վերականգնում է նրանց ուժերը շոկային (ցնցակաթված) թերապիայից հետո։ Սովորաբար երաժշտական թերապիան ընկերանում են հիվանդի տրամադրությանը համապատասխան կատարումներով, հետո աստիճանաբար այնպիսի երաժշտություն են կատարում, որը գրգռում է հիվանդին, նրա մոտ առաջացնում հետաքրքրություն կյանքի, ապրելու ընկատմամբ։ Այս մեթոդը խիստ բարերար է հատկապես խոր դեպրեսիաների (ճնշվածության) ժամանակ։ Լոակյացիայան ախտով տառապող հրեխաները դառնում են խոսկան և հակառակը՝ շատախոսությամբ, լսածն անվերջ կրկնող հիվանդ երեխաներն ու չափահասները երաժշտության շնորհիվ կարճ ժամանակում հրաժարվում են շատախոսությունից։

Բժիշկ-երաժշտական թերապևտները հանգել են այն կարծիքին, որ, ասենք, Մոցարտի երաժշտությունը հանգրստացնում է հիվանդներին, Բեթհովենինը՝ ակտիվացնում է հիվանդին, Մալերի ստեղծագործությունները՝ առաջացնում է ընկճվածություն, Վիլյամսինը՝ թշնամանք և կրնվարարություն։

Բուլղարացի գիտնականները առաջարկում են երաժշտական թերապիայի գործնական դեղատոմսեր.

— գրգռվածությունն իջեցնելու համար՝ Բախի № 2 կանտատը կամ Բեթհովենի «Լուսնի սոնատը»։

— Տագնապի զգացողությունից ձերբազատվելու համար՝ Շոպենի պրելյուդներն ու մազուրկաները կամ Ա. Ռուբինշտեյնի «Մեղեդին»։

— Գազազածության դեմ՝ Բախի Իտալական կոնցերտը» կամ Հայդնի սիմֆոնիաները։

— Հանգստացնելու և հոգնածության վերացման համար՝ Բեթհովենի Վեցերորդ սիմֆոնիայի 3-րդ մասը, Բրամսի «Օրորոցայինը», «Շուբերտի «Ավե Մարիան»։

Ո՞րն է, ի վերջո, այս մեթոդի գաղտնիքը։ Ամերիկացի հանրահայտ գիտնական, երաժշտական թերապևտ Ալան Վիտենբերգը, որ 20 տարվա փորձ ունի, բացատրում է.

«Երաժշտական թերապիան— դա երաժշտական դեղատոմս չէ, և ոչ էլ երաժշտական ունկընդրություն, որից մի քիչ երջանիկ ես դառնում։ Այն հոգեբանավերլուծական բարդ գործընթաց է, որը հնարավորություն է տալիս մարդկանց ճանաչել իրենց՝ երաժշտության միջոցով, հաստատել կոնտակտներ շրջապատող աշխարհի հետ։ «Ամեն մի երաժշտություն ունի սկիզբ, միջին մաս և վերջաբան։ Ինչպես և ցանկացած գոյություն, ինչպես իմքը՝ կյանքը։ Հենց սա էլ օգնում է մարդուն, վերադառնալ դեպի կյանք, այն մարդուն, որն անջատված էր աշխարհից։ Այդ իմաստով կարևոր է չծանրաբեռնել հիվանդին աղմուկով, հիշել, որ շատ կարևոր է նաև «դադարի պահը», այսինքն՝ հրնչյուններից ազատ տարածությունը»։

Պատրաստեց
Անուշ ՈՍԿԱՆՅԱՆԸ
Բժշկուհի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՀՀ ԳԱԱ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ նախագահության 1993 թ. նոյեմբերի 3-ի՝ «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 50-ամյակը նշելու միջոցառումների մասին» որոշման համաձայն, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ռուսերեն հրատարակության է պատրաստել՝ «ՀՀ ԳԱԱ-ի աշխատակիցների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին» աշխատությունը։ Այն ՀՀ ԳԱԱ հրատարակությանն է հանձնվելու ս/թ. սեպտեմբերին։ Խնդրվում է այն աշխատակիցներին, ովքեր առ այսօր իրենց մասին կենսագրական տեղեկություններ չեն ներկայացրել հեղինակային կոլեկտիվին, շտապեն. **նյութերի ընդունման վերջին ժամկետն է օգոստոսի վերջը։** Միաժամանակ խնդրվում է տեղեկություններ հայտնել Արմֆանից ռազմաճակատ մեկնած զոհված կամ անհայտ կորած աշխատակիցների մասին։ Նյութերը կարելի է հանձնել ամեն օր, **պատմության ինստիտուտ՝ աշխատության հեղինակային կոլեկտիվի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանին** կամ ինստիտուտի տնօրենի քարտուղարուհի Սեդա Տոնոյանին (հասցեն՝ Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 դ, 7-րդ հարկ, հեռ.՝ 52-93-63, 58-19-31, 58-19-13)։

...Իսկ եկեղեցում, որ պահեստ էր,
վառված մոմի հետքեր կային

Մեր պապերը գաղթել են Մուշից։ Եկա՛ղ, իրենց փոքրիկ գյուղն են կատուցել Արագածի դիմաց ու վերակենդանացրել իրենց ավանդները, կենցաղը։ Ես հիշում եմ մեր մեծերին, ովքեր Մշո բարբառով էին խոսում և օդալում հավաքված հետաքրքիր պատմություններ ասում։ Մշո դաշտի իրենց գյուղում նրանք սրբ. Ստեփանոսի եկեղեցի ունեին ու գաղթի ժամանակ հետները բերել էին եկեղեցական ոչ շքաղ, պարզ արդուզարդը։ Դա նրանց հավատն էր։ Եվ պատմում էին, որ գաղթի ժամանակ իրենցից շատերն աննամբ տեսել էին սուրբ Ստեփանոսին, որն ուղեկցում էր նրանց ու հայտնըվում, երբ օգնության կարիք կար։ Նա շատ բարի դեմք ուներ ու բոլոր վտանգներն անհայտանում էին, երբ սալերի քարավանը կանգ էր առնում որևէ լեռնանցքում կամ թուրք ջարդարարներից ոչ հետու։ Եվ ահա, տարիներ առաջ, երբ ես գյուղում էի, մի դեպք պատահեց, որը թեև աննշանակալի թվա շատերին, բայց կատարվել է ինձ հետ ու չեմ կարող չպատմել ձեր նոր բաժնին՝ «Անհավանական է, բայց...»։

Մուշից բերած արդուզարդերը մեր նախնիները տեղավորել էին նոր հիմնած գյուղի նորակառույց եկեղեցում, որը բնականաբար դարձյալ սրբ. Ստեփանոս էր կոչվում։ Եկեղեցին գործում էր մինչև 1937 թվականը, երբ կրոնը դրվեց փակի տակ, իսկ գյուղի եկեղեցին դարձավ կոլտնտեսության հացահատիկի պահեստը։

Ամառային մի երեկո, երբ ես կանգնած էի պահեստից մի քանի քայլի վրա, մթնշաղում նախկին եկեղեցու պատի տակ մի ծեր մարդ երևաց՝ ճերմակ մորուքով ու ճերմակ շորերով։ Թեև ամառ էր, բայց Ծաղկունյաց լեռներում, այն էլ երեկոյան նման զգեստն անսովոր է։ Հենց դա էլ իմ ուշադրությունը գրավեց։ Ծերունին մոտեցավ պահեստի փակ դռանը, մոմով լուսավորեց դուռը և ձեռքով հանգիստ հրեց այն։ Դուռը ճռռալով բացվեց և անծանոթը ներս մտավ։ Ես այդ ամենին նայում էի սովորականի նման ու երբ տուն վերադարձա, քեռիս, որը տնտեսությաս նախագահն էր, սեղանի վրայից վերցրեց բանալիների փունջը և ասաց.

— Գնամ, պահեստը ստուգեմ...

Ես նոր միայն անդրադարձա կատարվածին և պատմեցի, որ մի անծանոթ ծերունի քիչ առաջ պահեստ մտավ։ Բոլորս վազեցինք դեպի պահեստը։ Քեռիս հանգիստ շոկն քաշեց ու ծիծաղեց...

— Աչքիդ է երևացել։

Իրոք, դուռը փակ էր, կողպեքը վրան և ոչ ոք չկար։ Իզուր էինք իմ խոսքերը։ Տնեցիները հանգստացրին, ասելով, թե պատահում է այդպես, հուզմունք, վախ, երևակայություն, մթնշաղ ու... գերեզմանոցն էլ երկու քայլի վրա էր։

Հաջորդ օրը ճիշտ նույն ժամին, երբ լեռաց մած ստվերը ծածկեց փոքրիկ գյուղը ու նախիրը վերադարձավ հանդից, ես նորից կանգնեցի նույն տեղը։ Ոչինչ, ոչ ոք չկար... Հաջորդ օրերին ամեն ինչ մոռացվեց։

Մեկ շաբաթ հետո, կիրակնամուտին, նստած էի քեռուս հետ հարթ կտուրին, երբ ծերունին նորից երևաց՝ մոմը ձեռքին, մոտեցավ պահեստի դռանը, առանց կողպեքին ձեռք տալու բացեց դուռը և ներս մտավ։

Այս անգամ տագնապալից հարայ-հրոց սարքեցի տանը և մի քանի րոպեից բոլորս կանգնած էինք պահեստի փակ դռան առաջ։ Քեռիս, թեև կուսակցական էր և իրեն անհավատ էր համարում, այս անգամ բացեց կողպեքը և վախվորած ներս մտանք։ Եկեղեցում ոչ ոք չկար, բայց զարմանքը պատեց մեզ, երբ այնտեղից կախված նրագի վրա նկատեցինք թարմ վառված մոմի հետքերը։ Ոտնահետքեր կային և նոր հնձած գարու քլուրի վրա։ Կասկածն ավելորդ էր. եկեղեցում մարդ էր եղել։ Դեպքի մասին իմացան գյուղում։ Շատերը ծիծաղեցին, մեծերն էլ բացատրեցին, թե իմ նկարագրած ծերունին շատ նման է գաղթի ժամանակ իրենց տեսած սրբ. Ստեփանոսի տեսիլքին։ Գյուղի ամենատարեց կինը, կյանքում շատ բան տեսած ու տանը «Նարեկ» պահող մեր ազգականը հանգիստ մնկնաբանեց.

— Ես էլ տեսել եմ ու էլի տեսնողներ են եղել, որ սրբ. Ստեփանոսի պատկերով ծերունին, որ իրականում հենց իրքն է՝ Ստեփանոսը, ամեն կիրակնամուտին գալիս է, ներս է մտնում իր եկեղեցին, մոմ է վառում, մի քանի րոպե լուսավորում է եկեղեցին ու անհայտանում։ Բայց բոլորը չէ, որ տեսնում են նրան, այդ պատճառով էլ չեն հավատում։

Անհավատ ժամանակներ էին։ Վտանգավոր էր նույնիսկ այս մասին պատմելը։ Փառք աստծո, հիմա կարելի է ազատորեն պատմել, գուցե իմ պատմածը հետաքրքրի գիտությանը կամ աստվածաբանիներին, հոգեբաններին։ Ուրիշ նպատակ չունի իմ թղթակցությունը։ Հարգանքներով՝

Բաղդասար ՄԿՐՏՉՅԱՆ
Կենսաթոշակառու

ԼԷ ՍՈՒԱՐ. ԽԱՐԲԵՐԴ, ՑՈՒՐՏ ՉՄՌԱՆ ԱՎԱՐՏԸ

Ահսօր Եվրոպայում հայերին ճանաչում են զարաբաղյան հերոսամարտով։ Բոլորը նշում են, որ երեք միլիոնանոց հայ ժողովուրդը ոչ միայն ստեղծում է իր պետականությունը, այլև՝ ցրտի, սրկանքների, պատերազմի ու շրջափակման պայմաններում հակահարված է տալիս թշնամուն և օգնության ձեռք մեկնում Ղարաբաղին։ Հայերը ողբում են 1915 թվականի եղեռնը, ծանր տանում 1988 թվականի ավերիչ երկրաշարժը ու արդեն մի քանի տարի տևող ճգնաժամն ու շրջափակումը։ Բայց խիզախաբար դիմագրավելով այդ ամենը, հայ ժողովուրդն ապրում է այնպես, ասես ոչինչ էլ չկա։ Զրկանքներ, սով, աղքատություն, գոհեր, հաշմանդամներ, իսկ պատերին փակցված ազդագրերը վկայում են մշակութային նոխ, հարուստ կյանքի մասին։ Նոր ներկայացումներ, համերգներ, փառատոններ, հյուրախաղեր։ Ու նաև միջոց (քեն բիչ, սուղ) ու նյութական օժանդակություն է ցույց տրվում նրանց, ովքեր միայն կարեկցանքի են կարոտ։

Մտավոր բույլ զարգացած մարդիկ. *աշխարհում ամեն տեղ կան գիշերօթիկներ, բայց խարբերդի իմաստն այն է, որ այն գործում է հանրապետությունում, որտեղ ժողովուրդն ամբողջությամբ ապրում է հումանիտար օգնության հաշվին։*

Երբ ՄՍԾ-ի առաջին խումբը 1992-ի դեկտեմբերին եկավ Խարբերդ, տպավորությունը մոայլ էր. ցրտից, կեղտից, սովից կուչ եկած դժբախտ երեխաներ, որոնք իրենց կյանքը ինքնուրույն չեն կարող դասավորել ու սպասում են խնամքի ու կարեկցանքի։ ՄՍԾ-ի և տեղի գիշերօթիկի աշխատողների ջանքերով, սկսվեց վերակառուցումը։ Բելգիական «Էն սուար» հանդեսի թղթակից Մարսել Լերուան 18 ամիս հետո նորից եկավ Խարբերդ և իր թղթակցության խորագիրն ընտրեց *Հետևյալը. «Խարբերդ. ցուրտ ձմռան ավարտը»։*

Խորագիրն, ինչ խոսք, խորհրդանշական է. ցուրտ ձրմեռ՝ նաև փոխաբերական իմաստով։ Բելգիական ՄՍԾ-ի (բժիշկներն առանց սահմանի) ջանքերով և միջոցներով վերակառուցվեց կիսատ նորակառույցը և գիշերօթիկի սաները տեղափոխվեցին հարմարավետ սենյակներ, որտեղ ջեռուցվում էին կացարանները, կար լողանալու հնարավորություն։ Բելգիացիները ապահովում են գիշերօթիկը հագուստով, սննդով, գեղորայքով։ Բայց ամենակարևորը՝ Բելգիայի բժիշկների, դաստիարակների ջերմ, մարդկային վերաբերմունքն է սաների նկատմամբ։ Մրտավոր խոցված, շրջապատի նկատմամբ ոչ մի վերլուծական վերաբերմունք չունեցող հիվանդներն ինչպես են հրճվում, տեսնելով բելգիացիներին, գրկախառնվում են, նույնիսկ ֆրանսերեն մի քանի բառեր արտաբերում։

Գիշերօթիկում կյանքը դարձել է տանելի, բայց ահա սաների տարիքն անցնում է 20-ից, և նրանք պետք է բաժանվեն իրարից ու տեղափոխվեն Գեղամավանի հոգեբուժականը։ Ա. նունն է՝ բուժարան։ Չէ որ այստեղ վերջանում է այս սաների կյանքը։ Նրանցից յուրաքանչյուրը կարող է հոգատար ձեռքի, գուրգուրանքի, կարեկցանքի... չէ որ նրանք միշտ մնում են երեխաներ։ Իսկ ո՞վ պետք է տա այդ ամենը։ Բելգիայի բժիշկները ոչ միայն խարբերդի գիշերօթիկի աշխատողներին ցույց տվեցին ճույլերին օգնելու հնարավի օրինակ, այլև ահիմ դարձան հարցնելու. իսկ ո՞ւր են Հիպոկրատին երդում տված մեր բժիշկները։ Հիշում եմ. մի անգամ բրժշկական ինստիտուտից ելան պրակտիկայի, ավելի ճիշտ՝ էքսկուրսիա ու այլևս ոչ ոք չերևաց։ Իսկ ինչ հիանալի դպրոց է այստեղ՝ փորձ ձեռք բերելու, կարեկցելու, խղճալու, օգնության հասնելու դասեր ստանալու համար։ Ավա՜ղ, այստեղ շատ քիչ, հազվագյուտ են հյուրերը։ Հաճախ ենք մենք ազդագրերում կարդում, թե ինչպես մի հարուստ բանկ կամ կոոպերատիվ հովանավորչական շուներ է անցկացնում՝ ռեկլամային աղմուկ-աղաղակով։ Իսկ խարբերդի բշվառներն ամբողջ ձմեռ ու գարուն մի խնձոր կամ որևէ պտուղ ու բանջարեղեն չեն համտեսել։ Որտե՞ղ եք, հայ բարերարներ, մեծահարուստներ, կադրիակ-մերսեդեսներով գրոսնող շուկայի ժամանակների հաջողակներ։ Մենք ուրախ ենք, որ դուք շատ գրամ ունեք, բայց դուք ե՞րբ եք դառնալու հարուստներ։ Չէ որ հարուստը նա է, ով իր միջոցները կիսում է մյուսի, անօգնականի հետ, իսկ նա, ով չի անում այդ, ամբողջ կյանքում մնում է շատ գրամ ունեցող աղքատ։

Ես հաճախ ամաչում եմ, թե ինչպես մեր երեխաներն ու ծերերը, հաշմանդամներն ու միայնակները սպասում են դրսից օգնության, իսկ շատ հայաստանցիներ իրենց օրն անցկացնում են խորովածի ծխի մեջ ու ռեստորանային խրախճանքներում։ Այդ մասին նշել է և Մարսել Լերուան։

Տիգրանուհի ՄԱՐՏԻՆՅԱՆ

Լուսանկար 1. Գեղամավանի հոգեբուժարան.

— Լուսանկարիչ, մեզ մո՞տ...

Լուսանկար 2. Մարսել Լերուան պարում է Խարբերդի գիշերօթիկի սաուհու հետ։ Ինչպիսի՜ երջանիկ ու եզակի պահ վերջինիս համար։

Լուսանկար 3. Նա երբեք չի իջնի այս մանճակալից։

ԸՍՏ ՉԱՐԵՆՑԻ

Մայր է մտել Երևանում արեգակը լուսավառված
Իսկ կուչ եկած գնում էին ամբոխները մթահարված,
Նոր Արեշն էր դեմը կանգնած՝ ծխնելույզով
նա դողդողուն
Իսկ վերևում Սարի թաղն էր խավարի մեջ դեռ երևում,
Գերեզմանից դեպի հարավ, աճատեսիլ, բայց
դալկացած
Երևում էր երկաթուղու կայարանը՝ լուռ՝ սևակնած
Գնում էինք, ու գնալով անցնում էին նրանք առաջ,
Փողոցներով խավար դարձած վախն էր շրջում
համատարած.
Կանգառներում՝ իրարանցում, խառնաշփոթ ու
սպասում,
Տնքում էին, ասես հիվանդ, ամբոխները թշվառացած։
Մութ է հիմա։ Գիշերը խոր իջել է վար։
Մութ է հիմա, թանձր խավար,
Երկաթուղու կայարանում ուր ոչ մի լույս չկա
վառված,
Բայց մետրոյի խոր թունելում խռնված են
ամբոխներ հուսահատված...
Աչքերն հառած թանձր մութին, սրտատրոփ,
անապավեն՝
Սպասում են առավոտին՝ ճանապարհը շարունակեն։
Մի քիչ առաջ, հրապարակում, երբ դեռ գոռում էին
ազատ,
Մուտ էր թվում երջանկությունն՝ աղավնյակի թևեր
առած։
Հիմա սված, հոգնած, մոայլ, քաղաքներում ու
գյուղերում
Հացի կարոտ, լույսի կարոտ, միայն հույսին
ապավինած
Մինչև երկինք պարզած իրենց դրոշակը եռապատված,
Գնում էին խավարի մեջ, ամբոխները հուսախաբված...
Դեմը՝ քաղաքն անծիր, անծայր մի զանգված
խավարամութ,
Ուր ննստել է անաչք, անլույս, խորհրդավոր կապածր
մութ
— Քաղաքն է այս հազարամյա, ուր տագնապ ու տենդ
կա հիմի։
Դարձել է նա որպես վախից խելագարված մի
պատանի,
Բռնկվել է հույսով հետին, հոգևարքի տենդով վառված,
Ինչներ ասես, որ չեն տանի ամբոխները խելագարված։

Արտատպված է Ե. ՉԱՐԵՆՑԻ ժողովածուից, որոշ վրիպումներով...

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ. Երևան—19, Մարշալ Բաղրամյան 24 դ, հեռախոս՝ 22-44-26։ Դասիչ՝ 69238։ Գրաճցման վկ. 338։

Թերթը տպագրվել է ՀՀ նախագահության «Պարբերական մամուլ» տպագրության տնօրինության հասցեում՝ Աբովյան 2։ Ստորագրված է տպագրության 29.07.1994 թ.

ՏՆօրեն՝ Լավրենտի ԲԱՐՍԵՂՅԱՆ Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ